Azg
Ազգ
21 ՕԳՈՍՏՈՍ 2007 ԵՐԵՔՇԱԲԹԻ 149 (3801)

ԵԽԽՎ-ի մշակութային հուշարձանների մոնիտորինգի առաքելությունը կայցելի տարածաշրջան

Հարավային Կովկասում մշակութային հուշարձանների միջակի մոնիտորինգի նպատակով օգոստոսի վերջին տարածաշրջան կայցելի Եվրոխորհրդի խորհրդարանական վեհաժողովի (ԵԽԽՎ) առաքելությունը՝ բրիտանացի պատգամավոր Էդվարդ Օ'Հարայի գլխավորությամբ: Ինչպես տեղեկացրեց վեհաժողովի մշակույթի, գիտության եւ կրթության հանձնաժողովի քարտուղարության ղեկավար Քրիստոֆեր Գրեյսոնը, առաքելությունն այցելությունը կսկսի օգոստոսի 29-ին Ադրբեջան այցով, ապա կլինի նաեւ Հայաստանում: Ք. Գրեյսոնը նշեց, որ դեռեւս հստակեցված չեն այցի երթուղիները եւ Հայաստան այցի ժամկետները:

Նախապես նշվել էր, որ առաքելությունը կայցելի նաեւ Լեռնային Ղարաբաղ, Նախիջեւան եւ Թբիլիսի: Ք. Գրեյսոնը նշեց, որ այդ մանրամասները դեռեւս հստակեցման կարիք ունեն:

6-27 տարեկանները կպատվաստվեն կարմրուկի եւ կարմրախտի դեմ

ԳՈՀԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Հանրապետության բոլոր մարզերի 6-27 տարեկան տարիքային խմբի ներկայացուցիչները հոկտեմբերին լրացուցիչ պատվաստում կստանան կարմրուկի եւ կարմրախտի դեմ: «**Ազգի**» հետ հարցազրույցում իմունականխարգելման ազգային ծրագրի ղեկավար **Գայանե Սահակյանը** հայտնեց, որ առողջապահության նախարարության կողմից մշակվել է կարմրուկի եւ կարմրախտի տեղական դեպքերի վերացման, խոզուկի վերահսկման եւ բնածին կարմրախտային համախտանիշի վերահսկման ազգային ծրագիր, որն էլ կառավարությունը վերջերս հաստատել է: Ծրագրի ղեկավարի խոսքով, 6-27 տարիքային խումբն ինքնանպատակ չի ընտրվել, այլ մանրամասն ուսումնասիրությամբ է որոշվել հենց այդ խմբին լրացուցիչ պատվաստել հիշյալ երկու հիվանդությունների դեմ: Իմունականխարգելման ազգային ծրագրի ղեկավարը նշեց, որ 2004-2005 թթ. կարմրուկի եւ կարմրախտի հիվանդացության աճի բարձրացման ժամանակ հիմնականում հիվանդացել են այս տարիքային խմբի մարդիկ: «Այսինքն, սա բնակչության այն խավն է, որի մեջ դեռ իմունիտետը ձեւավորված չէ կարմրուկի եւ կարմրախտի դեմ պայքարելու համար: Հանրապետությունում երկու տարիքային խումբ պլանային պատվաստում է ստանում կարմրուկի եւ կարմրախտի դեմ: Առաջինը 1-3 տարեկան երեխաներն են, իսկ երկրորդ խումբը 6-27 տարեկանների տարիքային խումբն է, որի համար էլ նախաձեռնել ենք կարմրուկի եւ կարմրախտի լրացուցիչ պատվաստումները: Մեր հիմնական նպատակն է օժանդակելով պլանային պատվաստումներին՝ մարդկանց պաշտպանել կարմրուկից եւ կարմրախտից, որպեսզի մենք հաջորդ բռնկում կամ հիվանդացության բարձրացում Հայաստանում չարձանագրենք»:

Տես էջ 3

ԹՈՒՐՔԻԱ

Նախագահական ընտրությունների առաջին փուլում քվորումն ապահովված էր

Սակայն Աբդուլլահ Գյուլին չհաջողվեց ստանալ ընտրվելու համար անհրաժեշտ 367 ձայնը

Երեկ Թուրքիայի ազգային մեծ ժողովում՝ Մեջլիսում նախագահական ընտրությունների առաջին փուլի քվեարկությունն էր: Չնայած ընտրությունները բոյկոտելու որոշում ընդունած ժողովրդա-հանրապետական կուսակցության հորդորներին, քվեարկությանն անկախական 25 պատգամավորների հետ մասնակցել են նաեւ Ազգայնական շարժում եւ Ջախ ժողովրդավարական կուսակցությունները: Ավելին, վերջիններս նախագահի պաշտոնում առաջադրել են իրենց թեկնածուներին: Թեեւ դրանով ավելի քան ապահովվել է քվորումը, որի ցուցանիշը 550 տեղանոց Մեջլիսում 367-ը, սակայն դա չի հանգեցրել «Արդարություն եւ բարգավաճում» կուսակցության թեկնածու Աբդուլլահ Գյուլի ընտրությանը:

Քվեարկության առաջին փուլում Գյուլը 367-ի փոխարեն ստացել է 341 ձայն, այնքան, որքան չհաշված Մեջլիսի նախագահին, պատգամավորական տեղեր ունի իր կուսակցությունը: Նույնը կատարվել է Մեջլիսում 70 պատգամավոր ունեցող Ազգայնական շարժում կուսակցության թեկնածուի հետ: Ինչ վերաբերում է Ջախ ժողովրդավարական կուսակցությանը, որը հուլիսի 22-ի խորհրդարանական ընտրություններին մասնակցել էր ժողովրդա-հանրապետականի հետ դաշինք կազմած, ապա նրա թեկնածուն ստացել է 13 ձայն:

Սա նշանակում է, որ Մեջլիսում ժողովրդա-հանրապետական կուսակցության ցուցակներով ընտրված 112 պատգամավորից 13-ը ձախ ժողովրդավարականի ներկայացուցիչներ են: Քվեարկության երկրորդ փուլը նշանակված է օգոստոսի 24-ին: Եթե այդ օրը Աբդուլլահ Գյուլին չհաջողվի ստանալ 367 ձայն, ապա նրան Թուրքիայի նախագահ ընտրվելու համար բավարար է օգոստոսի 28-ին նախատեսվող երրորդ փուլում ստանալ 276 ձայն:

Հ. Ղ.

ԳՈՒՅԺ

Էդվարդ Իսաբեկյան

Կյանքից հեռացավ եւս մի դասական՝ Էդվարդ Իսաբեկյանը, 93 տարեկանում, Աշտարակի իր մենասան մեջ, փառքի բոլոր շնորհներն ուսերին: Համարվում էր մեր գեղանկարչության լավագույն մոնումենտալիստը, էպիկական շնչառությամբ կոմպոզիցիայի մեծ վարպետը, միաժամանակ դիմանկարչության մեծ վարպետներից մեկը:

Ծնվել էր Իգդիրում, 1914-ի նոյեմբերի 8-ին: 1941-ին ավարտել էր Թբիլիսիի գեղարվեստի ակադեմիայի գեղանկարչության բաժինը: 1941-ից ի վեր, մինչեւ 2005-ը ազգային պատկերասրահում կազմակերպվածը, որը փաստորեն եղավ նրա արվեստի վերջին հրավառությունը, մասնակցել է բազմաթիվ ցուցահանդեսների: Նրա գործերը հանգրվանել են Հայաստանի եւ արտասահմանի տարբեր թանգարաններում, ինչպես նաեւ մասնավոր հավաքածուներում: Վերջին տարիներին տեսողության կորստի պատճառով դադարել էր նկարելուց:

1967-86 անընդմեջ 19 տարի ղեկավարել է ազգային պատկերասրահը, հիմնադիրներից էր Երեւանի գեղարվեստի ինստիտուտի, որի պրոֆեսորներից էր, ՀՀ ժողովրդական նկարչի, ՀՀ պետական մրցանակի դափնեկրի, Մեսրոպ Մաշտոց եւ Թեքեյան մշակութային միության «Ադամանդակոտ Արարատ» շքանշանների ասպետ:

տի տիտղոսին վերջին տարիներին արժանիորեն ավելացել էր Երեւանի պատվավոր քաղաքացու վկայականը: Մշտապես կապված հայրենի Իգդիրին՝ հեղինակել էր համանուն վեպը, կարոտի ու ցավի իր պատմությունը:

(Կարդալ նաեւ էջ 6)

Հոգեհանգիստը տեղի կունենա այսօր, օգոստոսի 21-ին, ժամը 18-ին, Երեւանի Սայաթ-Նովայի 5, բն. 20 հասցեում: Իսկ վաղը, օգոստոսի 22-ին, արվեստասերները վերջին հրաժեշտը կտան նկարչին՝ Երեւանի կամերային երաժշտության տանը, որտեղից նրա աճյունը վերջնական հանգրվան կգտնի Կոմիտասի անվան զբոսայգու պանթեոնում:

Ցավակցություն

Ժամանակակից հայ կերպարվեստի նահապետի՝ Էդվարդ Իսաբեկյանի մահվան կապակցությամբ Հայաստանի Թեքեյան մշակութային միության վարչությունը խորապես ցավակցում է որդուն՝ Երեւանի գեղարվեստի ակադեմիայի ռեկտոր Արամ Իսաբեկյանին եւ մյուս հարազատներին:

• • •

Մեր ժամանակների մեծանուն նկարիչ Էդվարդ Իսաբեկյանի մահվան կապակցությամբ «Բարգավաճ Հայաստան» կուսակցության նախագահ Գագիկ Ճառուկյանը եւ կուսակցության քաղաքական խորհուրդը խորապես վշտակցում են նրա որդուն՝ ԲՀԿ քաղխորհրդի անդամ, Երեւանի գեղարվեստի ակադեմիայի ռեկտոր, պրոֆ. Արամ Իսաբեկյանին:

• • •

Հայ ժողովրդի տաղանդավոր զավակ Էդվարդ Իսաբեկյանի վախճանման կապակցությամբ Երեւանի գեղարվեստի ակադեմիայի ողջ կոլեկտիվը խորապես ցավակցում են ԵԳՊԱ ռեկտոր Արամ Իսաբեկյանին, Իսաբեկյանների ընտանիքին:

• • •

Նույն տխուր առիթով պրոֆ. Արամ Իսաբեկյանին ցավակցում է «Ազգ» օրաթերթի խմբագրությունը:

Երեւանի զգալի մասը երեք օր զրկված կլինի գազամատակարարումից

Ըստ «Հայոռազազարդ» ընկերության տարածած տեղեկատվության, Հյուսիսային Կովկաս-Անդրկովկաս մայրուղային գազատարի վերանորոգման աշխատանքների պատճառով 6 օրով կդադարեցվի Հայաստանի եւ Վրաստանի գազամատակարարումը: Սակայն դարձյալ համաձայն նույն աղբյուրի, սպառողների գազամատակարարումը չի դադարեցվի եւ կապահովվի Աբովյանի գազաթահեստարանում պահեստավորված գազի շնորհիվ: Միաժամանակ տեղեկացվում է, որ, այնուամենայնիվ, Երեւանի զգալի մասի բաժանորդների գազամատակարարումը կդադարեցվի, եւ որ այդ անջատումները պայմանավորված են գազամատակարարման ցանցի ընդլայնման աշխատանքներով: Մասնավորապես օգոստոսի 20-ի առավոտյան ժամը 8-ից մինչեւ օգոստոսի 23-ի ժամը 10-ը կդադարեցվի Ավան, Քանաքեռ-Զեյթուն, Արաբկիր, Աջափնյակ, Դավիթաշեն, Մալաթիա-Սեբաստիա համայնքների, Կենտրոն համայնքի Կիլիկիա, Նորագյուղ, Կոնդ, Կոզեռն թաղամասերի, խորհրդարանի, Գ. Լուսավորչի, Պարոնյան, Աշտարակի, Սարյան, Բաղրամյան, Անտառային, Դեմիրճյան, Իսահակյան, Թումանյան, Մոսկովյան, Լեոյի, Բրյուսովի, Արշակունյաց փողոցների, ինչպես նաեւ Կոտայքի մարզի Ձորունի եւ Քասախ գյուղերի բնակիչների գազամատակարարումը:

Վերջին պահին Ռեգնում գործակալությունը հայտնեց, որ Գազպրոմ ընկերությունը մի քանի ժամից վերականգնում է գազի մատակարարումը Հայաստան եւ Վրաստան ամբողջ ծավալով:

Ա. Մ.

Հրեական կազմակերպությունն ու ԱՄՆ նախագահը գործում են նույն կերպ. հեռացնում են ցեղասպանության մասին խոսողներին

Միացյալ Նահանգներում գործող «Միություն ընդդեմ զրպարտության» հրեական կազմակերպության Նոր Անգլիայի տարածաշրջանային կառույցի ղեկավար Էնդրյու Թարզին պաշտոնանկ է արվել, երբ ցանկություն է հայտնել, որպեսզի կազմակերպությունը ճանաչի անցած դարասկզբի Հայոց ցեղասպանությունը՝ ուղղակի բաց եւ ազնվորեն խոսելով Հայոց եղեռնի մասին:

Ամերիկայի հայկական համագումարը տեղեկացնում է, որ Թարզիին զբաղեցրած պաշտոնից ազատելու որոշումը կայացվել է ուրբաթ օրը:

Էնդրյու Թարզին, որը ղեկավարել էր տարածքային կառույցը ավելի քան երկու տասնամյակ, «Բոստոն գլոբ» թերթին ասել է, թե կազմակերպության կեցվածքը «բարոյական տեսանկյունից աններելի է»: Թարզիի պաշտոնանկությունը կազմակերպության ղեկավարության եւ դրա տնօրեն Աբրահամ Ֆոքսմանի դեմ բուռն վրդովմունք է հարուցել տեղի հրեական համայնքում:

Գործարար, «Միություն ընդդեմ զրպարտության» տարածաշրջանային կառույցի խորհրդի նախկին անդամ Սթիվ Գրոսմանը, մասնավորապես, «Բոստոն գլոբ»-ին հայտարարել է. «Դա ինքնակործան, անհանդուրժողական եւ աղաղակաուցողական ակտ էր, այն էլ մի կազմակերպության կողմից, որի հիմնական առաքելությունը հանդուրժողականությունը խթանելն է»: Նրա կանխատեսմամբ, «Ֆոքսմանի գործողությունները պատճառ կդառնան տարածաշրջանային կառույցում համատարած հրաժարականների, կբարդացնեն կազմակերպության հարաբերությունները ոչ հրեա համայնքի հետ»:

Ըստ նույն թերթի լավատեղյակ աղբյուրի, «Միություն ընդդեմ զրպարտության» կազմակերպության տարածաշրջանային կառույցի գործադիր կոմիտեն սպասում է Թարզիին, ավելին, որոշել է պաշտպանել Հայոց ցեղասպանությունը ճանաչելու պատճառով:

Ա. Հ.

Միջազգային ասողագիտական համաժողովը՝ JENAM -ը Երեւանում

Քաղաքական ինքնագոհ դեմքերից հետո միջազգային եւ հայկական ասողագիտության ներհայաց եւ խորունկ դեմքերով կորիֆեյներին տեսնելը լրագրողների համար բարեբախտություն էր. երեկ Երեւանի ոչեսական համալսարանում բացվել էր JENAM-ը: Սա միջազգային ասողագիտական համաժողով է, որը կազմակերպվում է ամեն տարի եվրոպական որեւէ երկրում, եվրոպական ասողագիտական ընկերության կողմից՝ տվյալ երկրի ասողագիտական ընկերության հետ համատեղ: Հայաստանի համար մեծ պատիվ է, որ պարբերաբար եվրոպական եւ միջազգային ասողագիտական ձեռքբերումներն ամփոփող համագումարն այս անգամ կայանում է Հայաստանում, ընդորում՝ այդ հարցում մեր մրցակիցը Ուկրաինան էր, սակայն հայ ասողագիտության միջազգային վարկը թույլ է տվել ընտրությունը կանգնեցնել Հայաստանի վրա: Մեծ պատիվ լինելուց բացի, այս համաժողովը հայ ասողագետների համար հնարավորություն է միջազգային ասողագիտության վերջին տարիների ձեռքբերումների մասին իմանալու, տեղյակ լինելու բոլոր նորություններին, նոր համագործակցության դռներ բացելու: Համաժողովին մասնակցելու համար Երեւան են ժամանել մոտ 300 գիտնականներ եվրոպական երկրներից եւ ամերիկյան մայրցամաքից: Երեկվանից սկսվեցին եւ առաջիկա 5 օրերին տեղի են ունենալու 8 գիտաժողով եւ 6 հատուկ նիստ: Համաժողովի բացումից հետո ակադեմիկոս Յուրի Չիլինգարյանը հատկապես նշեց, որ այս համաժողովի ձեւաչափը հնարավորություն է միջազգային եւ ազգային ասողագիտական ձեռքբերումները ներկայացնելու, նոր ուղղությունների վրա Բյուրականի ուշադրությունը հրավիրելու, իսկ հայ երիտասարդ գիտնականները կկարողանան շփվել մեծ գիտնականների հետ եւ գիտական դպրոց անցնել:

Համաժողովի նախագահությունում են եվրոպական ասողագիտական ընկերության նախագահ Յոհակիմ Կրաուսերը, Հայաստանում Իտալիայի եւ Մեծ Բրիտանիայի դեսպանները, հայ հանրահայտ ասողաֆիզիկոսներ, առեւտրի եւ տնտեսական զարգացման նախարար Ներսես Երիցյանը: 3. Կրաուսերն ասում էր, որ Հայաստանն աշխարհում հայտնի է որպես ասողագիտական կենտրոն, նշում, որ անձամբ ճանաչել է Վիկտոր Համբարձումյանին եւ Բենիամին Մարգարյանին, գովեստի խոսքեր ասաց հայ մշակույթի մասին: Մեզ հետ զույգում գերմանացի անվանի գիտնականն առանձնացրեց մի քանի տխ ուղղություններ, որոնք մեծ հետաքրքրություն են ներկայացնելու համաժողովում՝ արտաարեգակնային մոլորակներ, բարձր էներգիաների ասողաֆիզիկա, վիրտուալ ասողաֆիզիկա եւ այլն: Գիտաժողովի խորագիրը՝ «Մեր անկայուն տիեզերքը»...հայկական ասողագիտության ներկային մոտ է, քանի որ Բյուրականի ասողադիտարանի ուսումնասիրությունների ուղղություններից մեկը հենց անկայուն տիեզերքն է՝ մեր ասողագետները զբաղվում են անկայուն ասողերի, ակտիվ միջուկներով գալակտիկաների ուսումնասիրությամբ, նաեւ՝ վիրտուալ ասողագիտությամբ: Վերջինս ժամանակակից ասողագիտության նորույթներից է, եւ նոր միջավայր է ստեղծում ասողագիտության մեջ՝ նոր ձեւով հետազոտություններ անելու հնարավորություններ ստեղծելով: Ի դեմ՝ համագումարի 8 գիտաժողովներից մի քանիսը հայ ասողաֆիզիկոսներն են ղեկավարելու՝ Տիգրան Մաղալյանը, Հայկ Հարությունյանը, Արեգ Միքայելյանը, Դավիթ Սեդրակյանը:

Համագումարի տեղական կազմակերպիչներից Բյուրականի ասողադիտարանի առաջատար գիտաշխատող Արեգ Միքայելյանի խոսքով՝ այս համագումարը շատ անակնկալներ կարող է ունենալ, քանի որ շատ գիտնականներ են իրենց լավագույն արդյունքների մասին հենց այս ամփոփիչ գիտաժողովներում հայտարարում: Ա. Միքայելյանը վիրտուալ ասողագիտության գիտաժողովն է ղեկավարելու: Գրավիտացիոն ալիքների ասողաֆիզիկայի բնագավառը եւս այսօր հրատապ է, ըստ այդ գիտաժողովը ղեկավարող Դավիթ Սեդրակյանի՝ գրավիտացիոն ալիքների գոյությունը բխում է էյնշտեյնի տեսությունից, բայց մինչեւ հիմա այդ ալիքները չեն հայտնաբերված. այն խումբը, ով կհայտնաբերի այդ ալիքները՝ Նոբելյան մրցանակ կստանա: Հայ ասողագետների խումբն ուսումնասիրում է ոլորտը, թե ո՞ր օբյեկտներից կարելի է սպասել այդ ճառագայթումը, ինչ հաճախականությամբ եւ արդեն աշխարհում ստեղծված- գրավիտացիոն ալիքները չափող շատ թանկարժեք սարքերը երկնքի ո՞ր կողմն ուղղեն եւ այլն:

Համաժողովին հայտնի շատ ասողագետների մասին պակերացում կազմելու համար նշենք նրանցից մեկ-երկուսին. օրինակ՝ Փարիզի ասողադիտարանից Միշել Մայորն առաջին արտաարեգակնային մոլորակի հայտնաբերողն է եւ տվյալ ուղղության հիմնադիրը, Մեծ Բրիտանիայից երկու խոշոր ասողագետներ են ժամանել՝ «Օրիկոն» նախագծի ղեկավար Ջոն Դեվիսը եւ Էնդրյու Լուռենսը՝ անգլիական վիրտուալ ասողադիտարանի նախագահը: Ժամանած 300-ից ավելի գիտնականների մեծ մասը նրանց նման խոշոր ասողաֆիզիկոսներ են: Եկել են նաեւ միջազգային ասողագիտության մեջ ճանաչված հայ ասողագետներ ափյոտից՝ Ժորժ Ալեքյանը, Ֆելիքս Ահարոնյանը, Վահե Պետրոսյանը:

Սպասենք այս շատ ներկայանալի եւ հեղինակավոր համաժողովի երեւանյան գիտական անակնկալներին:

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ավտոմեքենաների տեխզննումը բլեֆ է

2007 թ. ավտոմեքենաների տեխզննման ժամկետը ավարտվում է օգոստոսի 31-ին, որից հետո վարորդները կտուգանվեն ըստ սահմանված կարգի՝ 50.000 դրամով: Իսկ թե ինչպե՞ս եւ որքա՞ն են վճարում վարորդները տեխզննում անցկացնելու համար եւ որքա՞ն է տարբերությունը վճարվող գումարների պարզելու համար «Ազգը» այցելեց Արաբկիր համայնքում՝ «Արմենտելի» հարեւանությամբ գտնվող տեխզննման կետ: Հանգստյան օրը փակ էր, իսկ երկուշաբթի մեքենաների հոծ բազմությունով էր շրջապատված: Սակայն տնակային պայմաններում տեղադրված կետի պատին չտեսանք որեւէ գրություն, թե ինչ կարգով ու ինչպես, ինչ փաստաթուղթ պետք է ներկայացնի վարորդը: Միակ գրությունն էր. «Ծխելը արգելված է, խախտողները կտուգանվեն 200 դրամ», ու հենց այս սենյակում էլ նստած երկու տղամարդ ծխում էին: Երբ վերջապես իմ հերթը հասավ, կետի պատասխանատու ոստիկանը հրաժարվեց պատասխանել որեւէ հարցի, ասելով. «Չե՞ տեսնում, թե ինչքան մարդ կա, հիմի դրանց թողնեմ ու քեզանո՞վ զբաղվեմ, գնա Իսակովի պողոտա, թող քեզ պատասխանեն, մի խանգարի, ես աշխատում եմ»: Կարելի է մտածել, որ ես գնացել էի պարոն ոստիկանի հետ քաղցր-մեղցր զրույց անելու: Բայց չէ՞ որ «Ազգի» խմբագրությանը դիմած շատ վարորդներ նշում են, թե ինչ «կարգով» են տեխզննման կետերը սանում:

30 րոպեում տեխզննման կետում մոտ 10 վարորդ մտավ փորիկ, նեղլիկ մի տեղ, «վճարեց» CO-ի դիմաց (3.000-15.000 դրամ, կախված մեքենայի մակնիշից, բեռնատար, մարդատար) ու հաջորդ սենյակ մտնելով գրանցվեց, սպասավ կտրոնը: Որեւէ մեքենա չստուգվեց: Այդ դեպքում ո՞ր են գնում անօրինական (անձնագրի մեջ դրված) գումարներն ու 1-2 րոպեում բոլորին տալիս են կտրոնը: Երբ այդ մասին ասացի կետի պատասխանատուին, վերջինս ավելացրեց. «Գնա քո գործին, ես ձեր թերթը կարդում եմ, խմբագիրներին ու լրագրողներին հարգում եմ, բայց իրավասու չեմ պատասխանել ձեր հարցերին, մի խանգարեք, թողեք աշխատեմ»: «Ազգն» էլ չխանգարելով զրուցեց վարորդների հետ:

Ըստ վարորդների, եթե նախկինում 10 ԱՄՆ դոլար կաշառք էին վճարում տեխզննման կտրոնի համար, այժմ նրանցից 90 տոկոսը վճարում է 5000 դրամ: Իսկ եթե փաստաթղթերում բացակայում է առողջության տեղեկանքը (ոշխո), ապա հոգ չէ, 5000 դրամ դնում են անձնագրի մեջ՝ հարցը լուծվում է: Այդ փաստաթուղթը ստանալու համար մարդասիր մեքենայի վարորդները ստիպված կաշառք են տալիս 3-5 հազար դրամ, բեռնատարներինը՝ 15.000, կախված վարորդի տեսքից ու գրպանի պարունակությունից: Վարորդներից մեկը, որ երկար տարիներ աշխատել է տրանսպորտի սպասարկման բնագավառում, ահա թե ինչպես մեկնաբանեց CO-ի ստուգումներ չանցկացնելը. «Մեր երկիր ներկրվող մեքենաները հիմնականում Ռուսաստանից են, անորակ են, սակայն ապացուցել հնարավոր չէ: Նոր մեքենան կարող է ունենալ նույն թերությունները, ինչ որ 20 տարվանը: Ստացվում է, որ CO գազի արտանետումներով միայն փաստաթղթեր, օրենքներ, որոշումներ ընդունել կարող ենք, իսկ լուրջ ստուգել, արգելել՝ ոչ: Փողը ամեն հարց լուծում է: Մոտենում ես տեխզննման կետին ու որպեսզի ավելորդ քաշքռուկի առաջ չկանգնես, քանի որ ամեն մի չնչին բանից՝ դեղատուփի, կրակմարիչի, նախազգուշացնող վթարային նշանի բացակայությունը պատճառ բռնելով, չնայած որ բոլոր պահանջվող մուծումները կատարել ես, մի պատճառ կբռնեն ու եթե որոշակի գումար չդնես անձնագրի մեջ, ապա չեն ձեւակերպի»: Բայց չէ՞ որ CO-ի արտանետումներ առաջանում են նաեւ վատ որակի բենզինից, իսկ դա նույնպես չի ստուգվում, մեր խոսակցությանը խառնվելով ավելացրեց մեկ այլ վարորդ, որը իր «ԳԱԶ-3110» մակնիշի 2003 թ. մեքենայի տեխզննման համար էկոլոգիայի եւ գույքահարկի համար վճարել էր 45.000 դրամ եւ դեռ CO-ի համար հերթի էր կանգնել: 1984 թ. արտադրության «Ժիգուլի» վարորդը 20.000 դրամ էր վճարել տեխզննման դիտման կտրոնը ստանալու համար նաեւ մաղարիչ՝ 5000 դրամ: Իսկ երբ հարցրի, թե ինչո՞ւ եք 5000 դրամ տվել, պատասխանեց. «Դե դա ընդունված է, բոլորը տալիս են, եթե չտաս, չեն տա»: 1986 թ. արտադրության «Ժիգուլի» մեքենայի մեկ այլ վարորդ ասաց, որ կարողացել է միայն 3000 դրամ էկոլոգիայի եւ 8000 դրամ մեքենայի ձիաուժից կախված գույքահարկը վճարել, իսկ մնացած գումարներն ի վիճակի չէ մուծել, հազիվ ծայրը ծայրին են հասցնում: «9 անձից բաղկացած ընտանիք պահելը հեշտ չէ առանց աշխատանքի, ու եթե չկարողանամ ժամանակին տեխզննման կտրոնը հանել, կտուգանեն: Թող տուգանեն ավել փող վերցնողներին, հաս-հաս ստուգեն մեքենաները, որ անսարքները կաշառքով կտրոն չստանան: Հլա թող մի հաս դրանց գտած փողերը հավեն... Դե տեսեք, էս 30 րոպեում 15 մարդ մտավ ու դուրս եկավ կտրոնով: Հիմա հավեք, թե մեկ օրում որքան գումար են շորթում մեզանից ու դեռ դա քիչ է, վրան էլ տուգանքներ են ավելացնում»:

Ասեմ նաեւ, որ վարորդները խմբվել էին իմ շուրջն ու իրար լրացնելով բազմաթիվ անօրինականություններ նշում, իսկ 100 մետր այն կողմ «տեխզննումը» շարունակվում էր ու կշարունակվի մինչեւ օգոստոսի 31-ը:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱՍԿԱՐՅԱՆ

ՀԱՅ-ԿՈՐԵԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայաստանում Կորեայի դեսպան Կյոն լի Հյունգ. «Մեկ տարի անց ակնառու հաջողություններ կարձանագրենք»

Հայաստանում Կորեայի Հանրապետության նորանշանակ դեսպան Կյոն լի Հյունգը «Ազգ»-ի հետ զրույցում ափսոսանք հայտնեց, որ իր առաքելությունը Հայաստանում մշտապես ներկայությամբ չի կարող իրականացնել (նստավայրը՝ Մոսկվա): «Ինչպես եւ սպասում էի, այստեղ արժանացա ջերմ հյուրընկալության եւ զգում էի, որ հաճախ Հայաստան գալու ցանկություն եմ ունենալու»: Դեսպանը գոհունակություն հայտնեց նաեւ գործնական հանդիպումներից՝ Հայաստանում Կորեայի Հանրապետության նորանշանակ դեսպան Կյոն լի Հյունգն օգոստոսի 17-ին ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանին իր հավատարմագրերն է հանձնել, հանդիպել արտաքին գործերի, առեւտրի եւ տնտեսական զարգացման ու կրթության նախարարներին եւ Վ. Բյուսովի անվան լեզվաբանական համալսարանի ռեկտորին: Հանրապետության նախագահը շնորհավորել է դիվանագետին՝ պատշաճը ստանձնելու առթիվ եւ նշել, որ Հայաստանի ասիական քաղաքականության մեջ Կորեայի հետ հարաբերությունները կարեւոր տեղ զբաղեցնում: Նա ընդգծել է նաեւ երկու երկրների համագործակցության զարգացման դրական դինամիկան, փոխադարձ հետաքրքրության աճը եւ միջազգային կազմակերպությունների շրջանակում արդյունավետ գործակցությունը: Այնուհետեւ Ռոբերտ Քոչարյանը տպավորիչ է համարել տնտեսության տարբեր ոլորտներում Կորեայի հաջողություններն ու ասել, որ դրանք ուսանելի օրինակ կարող են լինել անցումային շրջանի դժվարությունները հաղթահարող մեր երկրի համար:

Հավատարմագրերի հանձնումից մեկ օր անց՝ օգոստոսի 18-ին Հայաստանում Կորեայի պատվո հյուպատոս Արմեն Աբրահամյանի հետ հանդիպումից հետո «Ազգ»-ի հետ զրույցում Կյոն լի Հյունգը տեղեկացրեց, որ Կորեան շահագրգիռ է իր առաջարկած բազմաթիվ ուսուցողական, փորձի փոխանակմանն ու երկրի զարգացմանն ուղղված ծրագրերում Հայաստանի առավել ակտիվ ներգրավմամբ. «Այս տարի Կորեական կողմը պատրաստ է այդ նպատակով ընդունել հայաստանյան 3 պատանյայի, իսկ եկող տարեսկզբին՝ գիտնականների, փորձագետների ու պատանյաների 10 հոգանոց պատվիրակություն, որը հնարավորություն կունենա հատուկ ծրագրով ծանոթանալու Կորեայի ինֆորմացիոն տեխնոլոգիաներին եւ տնտեսական զարգացման ընթացքին: Այդտեղ կմնարկենք կոնկրետ համագործակցության ծրագրեր: Արդեն իսկ Բյուսովի անվան լեզվաբանական համալսարանում կորեերենի դասավանդման կապակցությամբ նպատակ ունենք խրախուսել լեզուն ուսանելու ցանկություն ունեցող ուսանողներին 1-6 եւ 3-4 տարով մեր երկրում ուսանելու հրավիրելով»: Դեսպանի խոսքով, երկու երկրների միջեւ դիվանագիտական հարաբերությունների հաստատման տասնհինգամյակի կապակցությամբ հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին Հայաստան կժամանեն Կորեայի մշակույթի գործիչներ: Կյոն լի Հյունգը ներդրումների պաշտպանվածության իրավական հիմքի ամրապնդումը կարեւորեց Հայաստանի եւ Կորեայի միջեւ հարաբերությունները ընդլայնելու եւ խորացնելու համար. «Այս ամենի համար հարկավոր են իմ ջանքերը Մոսկվայում եւ Արմեն Աբրահամյանի աշխատանքն այստեղ: Ուզում եմ փաստել, որ Հայաստանի եւ Կորեայի փոխհարաբերություններն ամուր չեն, բայց դրանք էլ անհնար կլինեին, եթե չլիներ Արմեն Աբրահամյանի աշխատանքը: Մեր երկրների հարաբերությունների զարգացումը հենց նրա ջանքերի շնորհիվ է: Եվ այժմ ավելի լավ եմ զգում ինձ, քանի որ Աբրահամյանին եմ փոխանցել այս ծրագրերը, իսկ նա մեծ ջանքեր է ներդնում երկու երկրների հարաբերությունների զարգացման գործում»:

Հայաստանում Կորեայի պատվո հյուպատոս Արմեն Աբրահամյանն էլ, նշելով արդեն արված աշխատանքը, ընդգծեց. «Դեսպան Կյոն լի Հյունգի պատրաստակամությունն ու ջանքերը կնպաստեն երկու երկրների հարաբերությունների զարգացման ավելի գոհացուցիչ տեմպեր արձանագրելուն, հատկապես որ Հայաստանի Հանրապետության նախագահի գործում աջակցությունն էլ կա»:

«Ազգի» եւ դեսպանի հանդիպումը տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության նախագահի գործակալությունում: Դեսպանը գոհունակություն հայտնեց նաեւ գործնական հանդիպումներից՝ Հայաստանում Կորեայի Հանրապետության նորանշանակ դեսպան Կյոն լի Հյունգն օգոստոսի 17-ին ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանին իր հավատարմագրերն է հանձնել, հանդիպել արտաքին գործերի, առեւտրի եւ տնտեսական զարգացման ու կրթության նախարարներին եւ Վ. Բյուսովի անվան լեզվաբանական համալսարանի ռեկտորին: Հանրապետության նախագահը շնորհավորել է դիվանագետին՝ պատշաճը ստանձնելու առթիվ եւ նշել, որ Հայաստանի ասիական քաղաքականության մեջ Կորեայի հետ հարաբերությունները կարեւոր տեղ

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակվում է ԺԶ տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 375010 Հանրապետության 47
Ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
www.azg.am

Գլխավոր խմբագիր
ՅԱՎՈՒՐ ԱՎԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635

Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱՎՈՒՐԵԱՆ / հեռ 529221

Լրագրողների սենյակ / հեռ 581841

Համակարգչ. ծառայություն / հեռ 582483

Շուրջօրեայ լրահաւաք ծառայություն / հեռ 529353

Համակարգչային շարուածը «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տրպագիր մամուլի միջոցով կամ ռադիոհեռուստատեսութեամբ առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի

Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում

Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

Տնտեսական աճը՝ 12,1 տոկոս, արտաքին առեւտրի բացասական հաշվեկշիռը՝ 1 մլրդ դոլար

Այսպիսի ցուցանիշներ են գրանցվել այս տարվա հունվար-հուլիս ամիսներին

Հայաստանի տնտեսական աճն այս տարվա առաջին 7 ամիսներին, համաձայն Հայաստանի ազգային վիճակագրական ծառայության նախնական ցուցանիշների, առաջին անգամը լինելով, գերազանցեց 12 տոկոսի սահմանագիծը եւ կազմեց 12,1 տոկոս: Հիշեցնենք, որ այս տարվա նախորդ ամիսների ընթացքում այդ ցուցանիշը տատանվում էր 10-11 տոկոսի շրջակայքում: Համախառն ներքին արդյունքը (ՀՆԱ) կազմել է 1 տրիլիոն 287 մլրդ դրամ:

Առաջ անցնելով նշենք, որ հուլիսին նախորդ՝ հունիս ամսվա նկատմամբ արձանագրված մոտ 38 տոկոս աճի եւ 7 ամիսներին արձանագրված տնտեսական աճի համար դարձյալ պարտական ենք հիմնականում շինարարության ոլորտին, որտեղ գրանցվել է 19,2 տոկոս աճ: Փաստորեն նախորդ հրապարակումներում արված կանխատեսումները, որ այս ոլորտի աճի տեմպերն ավելանալու են, իրականանում են, եւ պետք է սպասել, որ մինչեւ այս տարվա նոյեմբեր այդ միտումը կպահպանվի:

Արդյունաբերության մեջ շարունակվում է փոքր, բայց կայուն դարձած աճը: Այն կազմել է 1,3 տոկոս: Առանց էլեկտրաէներգիայի արտադրության արդյունաբերության արտադրանքի աճը, ինչպես եւ կիսամյակային ցուցանիշների դեպքում նույնն է մնացել՝ 0,2 տոկոս: Իսկ ահա առանց ադամանդի արդյունաբերական արտադրանքի ծավալն ավելացել է 8,7 տոկոսով: Դրական կարելի է համարել փաստը, որ այս ցուցանիշը ամսեամիս բարելավվում է, ինչն արդյունաբերական արտադրանքի ընդհանուր աճի պայմաններում խոսում է տնտեսության իրական հատվածի տարբեր ճյուղերի զարգացման շարունակման մասին: Ցավոք, այդ ցուցանիշը խոսում է նաեւ ադամանդի արտադրության ծավալների անկման մասին:

Գյուղատնտեսության արտադրանքի ծավալը նվազել է 2,2 տոկոսով, մանրածախ առեւտրի շրջանառությունը աճել 10,8 տոկոսով: Աճի բարձր տեմպեր են արձանագրվել ծառայությունների ոլորտում՝ 17,9 տոկոս:

Արտաքին առեւտրի ծավալներն ավելացել են 37 տոկոսով եւ կազմել 2,2 մլրդ դոլար: Հայաստանից արտահանվել է 631 մլն դոլարի ապրանք, որը գրեթե 20,8 տոկոսով ավելի է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ: Ներմուծումը կազմել է 1 մլրդ 361 մլն դոլար կամ 44,5 տոկոսով ավելի 2006 թ.-ի նույն ժամանակահատվածի համեմատ: Արտաքին առեւտրում բացասական հաշվեկշիռը խորացել է, կազմելով ուտիր 1 մլրդ դոլար: Առանց ադամանդի արտահանման-ներմուծման ցուցանիշներն են. արտահանումը՝ 538 մլն դոլար, ներմուծումը՝ 1531 մլն դոլար: Ադամանդի արտահանման ծավալն այս տարվա առաջին 7 ամիսներին կազմել է 93 մլն դոլար:

Միջին ամսական աշխատավարձը 2007 թ.-ի առաջին կիսամյակում գերազանցել է 72 հազար դրամը, բյուջետային ոլորտում այն կազմել է 53 հազար դրամ, մասնավոր հատվածում՝ 90 հազար դրամ:

ԱԲԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Հայաստանի ամերիկյան համալսարանի նախագահը պարգեւատրվեց «Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» շքանշանով

Օգոստոսի 18-ին Մայր աթոռ Սուրբ Էջմիածնում Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ կաթողիկոսը «Ս. Սահակ-Ս. Մեսրոպ» շքանշան հանձնեց Հայաստանի ամերիկյան համալսարանի նախագահ, դոկտոր Հարություն Արմենյանին՝ գիտամանկավարժական եւ հասարակական բեղուն գործունեության համար: Վեհափառ հայրապետը Հարություն Արմենյանին տված կոնդակում բարձր է գնահատել նրա տասնամյակներ շարունակ անխոնջ նվիրումով ծառայությունը՝ առողջապահության բնագավառում: «Բազում անգամներ մենք առիթ ունեցել ենք նաեւ դրսեւորված տեսնել Առաքելական մեր Սուրբ եկեղեցու եւ Մայր աթոռ սուրբ էջմիածնի հանդեպ Ձեր սերն ու անխախտ հավատարմությունը, որը կրում եք Ձեր հոգում՝ իբրեւ արժանի զավակ լիբանանահայ համայնքի», ասված է կոնդակում:

Հարություն Արմենյանը իր շնորհակալական խոսքում նշեց. «Այս շքանշանը չափազանց մեծ պատիվ է ինձ համար, բայց այս պարգեւը կիսում եմ բոլոր նրանց հետ, որոնց հոգատարությունն ու խնամքը տեսել ու շարունակում են տեսնել տարբեր աշխարհագրությունների ու ժամանակների ընթացքում»:

Մ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Հերթական տոնական միջոցառումը Սբ. Երրորդություն եկեղեցում



Հայ առաքելական եկեղեցին դարեր շարունակ ոչ միայն ծիսակատարության, աղոթքի վայր է եղել, այլեւ ազգապահպանման մեծ դեր է ունեցել: Այսօր եւս եկեղեցին քաջալերում եւ հնարավորություն է տալիս երիտասարդներին ինքնաբացահայտվելու, ստեղծագործելու՝ ուղեցույց լինելով ազգային, բարոյական արժեքների:

Օգոստոսի 19-ին Սբ. Երրորդություն եկեղեցու դահլիճում բաց թողնվեցին սպիտակ աղավնիներ՝ երիտասարդաց միությունը նշում էր Նավասարդի տոնը: Նրանք ցուցադրեցին տարբեր մասերից բաղկացած ներկայացումների շարք, որոնք ներկայացրեցին Նոյի ժամանակներից մինչեւ մեր օրերը ստեղծված հայկական մշակույթը, քրիստոնեության տարածումը, երգ, պար: Դահլիճը լի էր համայնքի եւ տարբեր միությունների երիտասարդներով:

- Մեր առջեւ նպատակ էինք դնել բեմադրության միջոցով հանդիսատեսին հասցնել Աստծո պատվիրանները: Նման միջոցառումներ պարբերաբար կկազմակերպվեն,- ասաց բեմադրության երիտասարդ ռեժիսոր **Արկադի Հարությունյանը:**

- Այս միջոցառումը-շատ մեծ ոգեւորություն առաջացրեց երիտասարդներիս մեջ: Ես հասկացա մի պարզ բան, որ եթե կա սեր եւ ցանկություն, ապա հնարավոր է ամեն ինչ: Միջոցառմանը մասնակցելով մեր մեջ շնորհներ բացահայտեցինք: Ես վարսահարդար եմ, երբեք չէի պատկերացնի, որ կարող եմ բեմ բարձրանալ,- խանդավառված պատմում էր **Նաիրան:**

- Շատ մարդկանց մեջ պատկերացում կա, որ եկեղեցին մոայլ է, գորշ, բայց այս միջոցառումը կրկին ապացույց է, որ ընդհակառակը, եկեղեցին պայծառ է, ծաղկուն, կյանքով լեցուն,- ասաց հանդիսատեսներից **Արաքսը:**

- Ես շատ ուրախ եմ եւ զարմացած, որ կան նման երիտասարդաց միություններ: Տեսնելով երիտասարդների համախումբ աշխատանքը, նվիրվածությունը Հայ առաքելական եկեղեցուն, ցանկություն առաջացավ միանալու նրանց,- ավելացրեց **Կարենը:**

ԼՈՒՍԻԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

Հանրապետության հրապարակի շտրվանների եւ մայրաքաղաքի շինարկարգման մասին

Նոր եւ վերանորոգված վերելակներ

Հանրապետության հրապարակի շտրվանների վերակառուցման աշխատանքներն արդեն ավարտվել են: Այստեղ 1986 թ.-ից ի վեր նորոգումներ չեն կատարվել, եւ մեծ ջրակորուստներ կային: Շուտով կսկսվի շտրվանների ձեւավորման աշխատանքը: Այս մասին երեկ հաղորդագրությունում տեղի ունեցած հերթական մամուլի ասուլիսի ժամանակ հայտնեց փոխքաղաքապետ **Վանո Վարդանյանը:** Այնուհետեւ նա հայտնեց, որ Երեւանի 8 վթարային շենքերից 2-ի ամրացման աշխատանքներն ավարտվել են: Դրանք Նժդեհի 8/1 եւ 8/2 շենքերն են: Մյուսների ամրացման աշխատանքները շարունակվում են: Ըստ փոխքաղաքապետի, այս տարի նախատեսված է լուսավորման աշխատանքներ իրականացնել 86 փողոցներում, որոնցից 36-ն արդեն լուսավորված են: Ավելի քան 4 հազար մետր ոռոգման ջրի խողովակներ են անցկացվել Աջափնյակ համայնքում եւ 2 հազար մետր շարունակվում են անցկացվել Շենգավիթում, որը նախատեսվում է ավարտել հոկտեմբերին:

Այս տարի ասֆալտապատման աշխատանքներ պետք է կատարվեն 100 փողոցներում եւ ասֆալտապատվի 420 հազար քմ տարածք, որից 386 հազար քմ-ն արդեն ասֆալտապատվել է: Բացի այդ, կատարվում են նաեւ ճաքալցման աշխատանքներ, որը նոր տեխնոլոգիայի արդյունք է եւ որի մասին, ի դեպ, առաջին անգամ գրվել է մեր թերթում: Անցած ժամանակահատվածում ճաքալցվել է 30 հազար գծամետր: Եվս 4 փողոցներում, բացի ասֆալտապատումից, հանվում են տրամվայների գծերը, իրականացվում բարեկարգման աշխատանքներ: Դրանք են Սեբաստիա, Լենինգրադյան, Գայի, Սասունցի Դավթի փողոցները:

Նորագյուղի ջրամատակարարման եւ էներգամատակարարման առնչությամբ ստեղծված իրավիճակի առնչությամբ լուծումներ են տրվել՝ անց են կացվել նոր ջրագիծ եւ էլեկտրամատակարարման մալուխ: Նախատեսված է նաեւ գազամատակարարման խողովակներ անցկացնել այս թաղամասում:

Վանո Վարդանյանը երեկ անդրադառնալով մայրաքաղաքի ամենախոցելի հարցերից մեկին՝ ջերմամատակարարմանը, ասաց, որ, ըստ գլխավոր հատակագծի, նախատեսվում է Երեւանը ջեռուցել կենտրոնացված ջերմամատակարարմամբ: Դա նպատակահարմար է քաղաքացիների անվտանգության, քաղաքաշինական նորմերի պահպանման եւ բնապահպանական նկատառումներով: Նա ասաց, որ այդ ուղղությամբ աշխատանքներ են ընթանում, բայց առանց որոշակիացնելու՝ թե ի՞նչ աշխատանքներ են դրանք եւ ո՞ր փուլում են գտնվում: Միայն նշվեց, որ նման աշխատանքներ են ընթանում Ավանում եւ Դավթաշենում: Բացի այդ, որոշ շենքերում իրագործվում է լոկալ ջեռուցման ծրագիրը:

Երեւանի ավելի քան 4 հազար վերելակներից կապիտալ կվերանորոգվեն 2400-ը, իսկ 50-ը պետք է փոխվեն եւ տեղադրվեն նորերը: Այդ նպատակով պետական բյուջեից հատկացվել է 3 մլրդ դրամ: Ներկայումս կապեր են հաստատվել ռուսաստանյան վերելակ արտադրող ընկերությունների հետ: Եվ վերջապես, Նուբարաշենի աղբավայրում աղբավերամշակման ձեռնարկության ստեղծման ճապոնական ընկերության հետ բանակցությունները մտել են պայմանագրի ստորագրման փուլ:

Ա. Մ.

6-27 տարեկանները կպատվաստվեն կարմրուկի եւ կարմրախտի դեմ

1-ին էջից

Ծրագրի ղեկավար **Գայանե Սահակյանն,** ընդհանուր առմամբ, կարմրուկի եւ կարմրախտի համաճարակային վիճակը հանրապետությունում բավարար ու հանգիստ է գնահատում, քանի որ այսօր կարմրուկի եւ կարմրախտի հիվանդացության եզակի դեպքեր են արձանագրվում: Գ. Սահակյանի տեղեկացմամբ, ընթացիկ տարվա առաջին կիսամյակում հանրապետությունում վերը նշված երկու հիվանդությունների մոտ տասը դեպք է գրանցվել: Սակայն «կարմրուկն ու կարմրախտը համաճարակաբանական բնական օրինաչափություն ունեցող հիվանդություններ են: Այսինքն՝ որոշակի ընդմիջումից հետո վիրուսի շրջանառության դեպքում, երբ մարդիկ ընկալ են եւ պատվաստված չեն հիվանդությունից, վարակվում են եւ կարող են վարակել մյուսներին: Այս լրացուցիչ պատվաստումներով մենք ընդհատում ենք այդ շղթան: Ստեղծվում է մի իրավիճակ, երբ վիրուսը կա շրջապատում, բայց ընկալ օրգանիզմ չկա, մարդը պատվաստված է եւ չի հիվանդանում: Երբ մարդը դրսում հիվանդանա եւ գա Հայաստան, չկա այն ընկալ օրգանիզմը, ում կարող է վարակել: Ամբողջ նպատակը վիրուսի շրջանառությունը երկրում ընդհատելն է»:

Կարմրուկի եւ կարմրախտի հիվանդացության աճ վերջին անգամ հանրապետությունում եղել է 1997 թ. եւ 2004 թ.: Մասնագետը հիվանդությունների աճը հետեւյալ կերպ է մեկնաբանում. «Տարիների ընթացքում այդ ընկալ օրգանիզմները կուտակվում են, եւ այդպիսի բռնկումներ լինում են: Այդ տարիներին էլ վիրուսի շրջանառությունն էլ կար, եւ միանգամից հիվանդացության բարձրացում տեղի ունեցավ»:

Իմունականխարգելման ազգային ծրագրի ղեկավարի տեղեկացմամբ, կարմրուկի եւ կարմրախտի լրացուցիչ պատվաստումներն իրականացնելու համար արդեն հանձնաժողով է ստեղծվել, որը բաղկացած է առողջապահության նախարարության եւ միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներից: Հանրապետական հանձնաժողովն աշխատում է նաեւ մարզերում եւ, ըստ էության, ծրագրի իրականացման նախապատրաստական փուլն ավարտված է: Ծրագիրն իրականացնողները սեպտեմբերի առաջին տասնօրյակում եւս մեկ անգամ պետք է ճշտեն 6-27 տարեկան տարիքային խմբի ներկայացուցիչների քանակը, ըստ որի էլ հետագայում կբաշխվեն պատվաստանյութն ու օժանդակ պարագաները: Ամբողջ հանրապետությունում կստեղծվեն նաեւ պատվաստումային ժամանակավոր կետեր: Ծրագրի ղեկավարները հույս ունեն մի քանի բաղադրիչներից կազմված այս ծրագրի իրականացմամբ մինչեւ 2010 թ. հասնել կարմրուկի եւ կարմրախտի տեղական դեպքերի վերացմանը:

Հարիւրամեայ տարեդարձի նշում Սուրէն Աբրահամեանի

Ընդհանրապէս հարիւրամեայ յոբելեաններ մեր հայ իրականութենէն ներս կը նշուին կազմակերպութիւններու, կուսակցութիւններու կամ հաստատութիւններու պարագային: Սակայն ուրբաթ Սաութֆիլդ Միչիգանի Ս. Յովհաննէս հայ Առաքելական եկեղեցւոյ հանդիսաւոր հաւաքուած աւելի քան չորս հարիւր հրաւիրեալները եկած էին շնորհատրելու հարիւրամեակը՝ ոչ թէ կազմակերպութեան մը, այլ գաղութի յայտնի ազգայիններէն, մշակական եւ հաւաստար ռամկավար, տակաւին մինչեւ վերջերս կուսակցական ժողովներուն իր գործօն մասնակցութիւնը բերող Սուրէն Աբրահամեանին:

Սուրէն Աբրահամեանի կեանքը ցոլացումն է հայ ժողովուրդի վերջին հարիւր տարուան գոյապայքարին: Ան ծնած է առաջին հայ քաղաքական կազմակերպութեան՝ Արմենական կուսակցութեան ծննդավայր, Վան քաղաքին մօտ գտնուող Լեզգ գիւղը, 1907-ին: Խառնակ տարիներ էին հայութեան համար. շուտով պիտի գար երիտթուրքերու տխրահռչակ 1908-ի յեղաբեկումը: Ապա Առաջին համաշխարհային պատերազմ ու Եղեռն: Ութ տարեկան Սուրէնը վկան պիտի ըլլար հայ ժողովուրդի պատմութեան փառապանծ մէկ դրուագին, ուր Վասպուրականի հայերը յաջողութեամբ դէմ պիտի դնէին շրջանի հայութիւնը բնաջնջելու թուրքական ծրագրին: Վանի դիմադրութեան յաղթանակի խանդավառութիւնը երկար չի տեւեր սակայն, եւ այս անգամ, Սուրէնը բազմահազար իր ազգակիցներուն հետ միասին, գաղթականի ցուցը ձեռքին կը փորձէ գտնել ապահով վայր մը հեռու թուրքական եաթաղանէն: Նախախնամութիւնը Սուրէնին կը նետէ իրաքեան Բաղուբա քաղաքը, ուր կը ճաշակէ գաղթականի բոլոր դժուարութիւնները:

Սակայն ինչպէս իր ժողովուրդին, Աստուած Սուրէնին ալ կարծէք շնորհած էր վերապրելու երկրորդ առիթ մը. ան ի վերջոյ 1921 թուականին կը հասնի Միացեալ Նահանգներու Դեթրոյթ քաղաքը: Պատանի Սուրէնը կը սկսի իր նոր կեանքը փորձելով օգտուիլ ապահով այս ափի ընձեռած պատեհութիւններէն:

Ուսումնասէր Սուրէնը, զինուած ճարտարագէտի վկայականով, կեանք մուտք կը գործէ, յաջողութիւններ արձանագրելով իր ասպարէզէն ներս: Կամուսնանայ Արմենուհիին հետ եւ կը ստեղծեն հայկական տոհմիկ բոյն մը:

Սուրէնը ամէն իրատնք ունէր բաւարարուած զգալու, սակայն ան իր ժողովուրդին հարազատ զաւակը ըլլալով անտարբեր չէր կրնար մնալ իր շուրջը թաւալող իրադարձութեանց: Ահա այսպէս է, որ կը սկսի Սուրէնին առնչութիւնը Ռամկավար ազատական կուսակցութեան Դեթրոյթի մասնաճիւղին հետ, որ կը շարունակուի մինչեւ այսօր: Ան կը մնայ յարգուած նահապետը գաղութիս ռամկավարներուն, նիւթապէս թէ բարոյապէս սատարելով կուսակցութեան բոլոր ձեռնարկներուն: Եվ պատահական չէր, որ Դեթրոյթի Արշակ Չօպանեան ակումբի ժրաջան ատենապետ Յակոբ Ալեխսանեանը Ս. Աբրահամեանի 100-ամեակին առիթով սացեր էր բազում շնորհատրական հեռագիրներ աշխարհի տարբեր կուսակցական մասնաճիւղերէն:

Սուրէն Աբրահամեանի հարիւրամեայ տարեդարձի ճաշկերոյթ-ձեռնարկին հանդիսավարն էր յոբելեարին դուստր՝ Էլիզաբէթը: Դիտին չէր Էլիզաբէթին պաշտօնը այդ օր, ան պիտի խօսէր ու ներկայացնէր իր գերդաստանի տանուտէրին ու ամենահարազատ մարդուն: Պիտի խօսէր՝ գուրգուրալից հօր, ազգային գործիչին, մշակական մարդուն եւ եկեղեցասէր հաւատացեալին մասին: Եթէ Սուրէն Աբրահամեան հօր մասին հետաքրքիր էր խօսիլ Էլիզաբէթին համար, ապա Սուրէնի միւս յատկանիշներուն մասին ան նախընտրեր էր վկայութեան կանչել իր հօր լաւագոյն բարեկամները:

Էլիզաբէթը նախ ներկայացուց Մ. Նահանգներու տարբեր շրջաններէն ժամանած ու սրահէն ներս գտնուող գերդաստանին անդամները, ապա բեմ հրաւիրեց Սուրէնի աւելի քան 35 տարուան կուսակցական գործընկեր, ՌԱԿ Կեդրոնական վարչութեան երկարամեայ նախկին անդամ ու նախկին ատենապետ, ընտանեկան բարեկամ ու մշակական, ազգային հասարակական գործիչ Երուանդ Ազատեանը:



Ազատեանի անգլերէն ու հայերէն լեզուներով արտասանած բովանդակալից ճառը յուզեց ներկաները: Ե. Ազատեան վեր հանեց յոբելեարին հայրենասիրական ու մշակական կողմը, որ շատ փիչ անհատներ կրցած են անընդմէջ գրեթէ ութսուն տարի, նիւթապէս թէ բարոյապէս սատարել ու պարկեշտօրէն ծառայել ազգին ու կուսակցութեան: Սուրէնը իր կուսակցական գործունէութեան առընթեր հանրութեան հրամցուցած էր գրական-հրապարակագրական ու յուշագրական գործեր, որոնց մօտէն առնչուեր էր Ե. Ազատեան, գրելով անոնց նախաբաններն ու օժանդակելով խմբագրութեան: Բոլորին ծանօթ էր Սուրէնին մանաւանդ «Վանէն Դիթրոյթ» յուշագրութիւնը, որ ինքնակենսագրութիւնն էր յոբելեարին. այն կրնար սեպուիլ նաեւ կենսագրութիւնը Եղեռնէն ճողոպրած ու Ամերիկա հաստատուած սերունդին: Կորուսեալ հայրենի հողի ու երդիքի այս մորմոքը մղեր էր Սուրէնը տարիներու ընթացքին գրելու տասնեակներով նամակներ զանազան պետական ու պաշտօնական պատասխանատուներու ու կազմակերպութիւններու ի պաշտպանութիւն Հայ դատի: Էլիզաբէթը խոստովանեցաւ, որ երբ Ե. Ազատեանը խորհուրդ տուած էր հաւաքել ու մէկ հատորով հրատարակել այդ նամակները, ինքնաբաւ չէր խանդավառուած: Բայց երկրորդ մտածումով մը համոզուեր էր, որ այս գործը Ցեղասպանութեան ճանաչման գործին օգտակար ըլլալէ բացի, նաեւ երեւան պիտի հանէր իր հօր հայրենասիրական գործը: Սուրէնը միայնակ ու առանց աղմուկի ու շեփորի, տարիներ շարունակ կատարեր էր գործ մը, որուն կարեւորութիւնը յետագային պիտի գիտակցին հայկական այլ կուսակցութիւններ թէ քաղաքական խմբաւորումներ:

Էլիզաբէթը ապա յաջորդաբար խօսք տուաւ Սուրէնի հոգեւոր տան՝ Ս. Յովհաննէս եկեղեցւոյ նախկին հոգեւոր հովիւ եւ յիսուն տարուան հարեւան Տէր Տիրան քահանայ Փափազեանին, գաղութիս հոգեւոր նախկին առաջնորդ, Հայաստանէն յատուկ հրաւիրուած Փառէն եպս. Աւետիսեանին, ինչպէս նաեւ այժմու հոգեւոր հովիւ Կարապետ քահանայ Քոչակեանին:

Այս գնահատանքի ու սիրոյ միջոցառումը աւարտեցաւ Սուրէն Աբրահամեանին շնորհակալական խօսքով, ուր ան յատուկ արձանագրեց իր երախտագիտութիւնը իր մօր ու եղբօր հանդէպ:

Երեկոն եզրափակուեցաւ ներկաներու շնորհատրութիւններով ու մաղթանքներով:

ՄԵՊԱՌԻՀ ԱՒԵՏԻՔԵԱՆ
Դեթրոյթ, ԱՄՆ

«Օրերը» շարունակվում է...

Թեւեւ դժվարություններ չեն լքում

Խմբագրությունը ստացավ «Օրեր» հանդեսի 2007-ի հերթական համարը: «Օրերը» շարունակում է հետեւել հայաստանյան ու եվրոպական կարեւոր իրադարձություններին եւ իր հրապարակումներում առանձնացնում է դրանցից մեզ համար առավել նշանակալիցները: Այս անգամ կարեւոր են դիտվել եվրոպահայ սփյուռքում մի շարք իրողություններ՝ Աշոտ Ոսկանյանի՝ Ավստրիայում ՀՀ դեսպանության Չեխիայի գրասենյակի ղեկավարի նշանակումը, Հայաստանյայց առաքելական եկեղեցու Ֆրանսիայի նորակազմ թեմի առաջնորդական ընտրությունները՝ հանձին Տրվան եպիսկոպոս Զաքարյանի:

Անդրադարձներ են արված մայիսին Հայաստանյան խորհրդարանական ընտրություններին եւ դրանց տրվող եվրոպական կազմակերպությունների գնահատականներին: Ըստ Հարավային Կովկասում եվրոպական միության հատուկ ներկայացուցիչ Պիտեր Սեմնեբիի, «Հայաստանը հանձնել է քննությունը եւ կշարունակի մերձեցումը ԵՄ-ի հետ»:

Ընթերցողական առավել հետաքրքրություն սովորաբար ներկայացնում են «Օրերի» մշակութային էջերը: Այս անգամ դրանցից ուշադրության արժանանում են հայ երգարվեստի ամենաթանկ ու սիրելի կերպարի՝ Լուսինե Զաքարյանի 70-ամյակին եւ անդրաշխարհում նրան միացած ամուսնու՝ հայ հոգեւոր երաժշտության գիտակ, շարականների լավագույն կատարող խորեն Պալյանի հիշատակին նվիրված Հակոբ Ասատրյանի հրապարակումները, եւ վերջինիս հարցազրույցը գրականագետ, արձակագիր, թարգմանիչ Ալեքսանդր Թոփչյանի հետ՝ Ռուբեն Սեւակին նվիրված «Եվ անգամ մահից հետո» իր վեպի առիթով:

Ով ներկա է գտնվել Լուսինե Զաքարյանի համերգին, լսել է նրան, դժվար թե տեւական

նորեն չտրվեր նրա երկնային ձայնի մոգական ազդեցությանը, չզգար իր ներսում այդ երգի զուլալող, վեհացնող ասվածային հատկանիշները: Հակոբ Ասատրյանը փորձել է գնահատել այն մեծ ներդումը, որ կատարեց Լուսինե Զաքարյան-Խորեն Պալյան երաժշտական զույգը հայ հոգեւոր մշակույթի պատմության մեջ:

Պ. Սեւակը Լուսինե Զաքարյանին համեմատել է ճարտարապետ Թորոս Թորամանյանի հետ: Ռաֆայել Իշխանյանը նրան համարել է անկրկնելի հրաշք. «Կարծում եմ, գրել է նա, որ էջմիածնի Մայր աթոռը Լուսինեին կկարգի մեր եկեղեցու սրբերի շարքը»: Երջանկահիշատակ Վազգեն Ա կաթողիկոսը նրա երգը համարում էր տեւական աղոթք, աղերս ու առաքելություն՝ համոզված նրա արվեստի բերած նպաստին հայ ժողովրդի հոգեւոր զարթոնքին: Այդ առաքելության մեջ պատկառելի մաս ուներ Խորեն Պալյանը՝ Լուսինեի գաղափարակից ամուսինը, հմուտ շարականագետը, որ գոց գիտեր հայ հին շարականներից շուրջ երկու հազարը. «Համալսարանի հսկա դահլիճը փոքրանում, չնչին բան էր դառնում, երբ այնտեղ երգում էին Խորեն Պալյանը եւ Լուսինե Զաքարյանը»,- գրել է Յուրի Խաչատրյանը **«Ազգում»**:

Հ. Ասատրյանը ցավով է անդրադառնում, որ ժողովրդին այնքան սիրելի Լուսինե Զաքարյանի 70-ամյակը նշվել է Ազգային գրադարանի մի համեստ ցերեկույթով միայն, ինչը պատահեց նաեւ Խորեն Պալյանի պարագայում: Նրա վաստակը աննկատ անցավ հայրենի կառավարողների հայացքից: Միայն Գարեգին Բ կաթողիկոսն էր, որ նրան 70-ամյակի առիթով շնորհեց Հայ առաքելական եկեղեցու «Ս. Ներսես Շնորհալու շքանշան»:

Ա. Թոփչյանի «Եվ անգամ մահից հետո» վեպը այս տարի արժանացավ երկու՝ ՀՀ նախագահի եւ ՀԳՄ «Տարվա լավագույն վեպ» մրցանակներին: Հետաքրքրական է Ալ. Թոփչյանի պատասխանը վեպի ժանրին անցնելու դրդապատճառների մասին: Հետանկախության շրջանում 1995-ին գրականագետը տպագրեց «Արտագրեր» ժողովածուն, ապա «Կիրկե կղզին» վեպը: Այս ժանրի նկատմամբ հետաքրքրությունը նա պայմանավորում է մեր ժամանակների չափազանց վիպականությամբ, իրականության ծայր հակասություններով, հերոսականությամբ ու սոռությունով:

Գրքի ընթերցողական հաջողության մասին են վկայում վեպը դպրոցական եւ բուհական ուսուցման ծրագիր մտցնելու, այլ լեզուների թարգմանության եւ ֆիլմի վերածելու կարծիքները: Ինքը՝ հեղինակը, գրելիս ի մտի է ունեցել բազմասերիանոց ֆիլմի գաղափարը: Սակայն այսօր թերահավատ է՝ իրագործումի անորոշությունից: Պատմական փաստաթղթերի վերաբերյալ Թոփչյանն ասում է. «Իմ վեպը սկսվում է այնտեղից, որտեղ վերջանում է փաստաթուղթը»: Մոտակա ստեղծագործական ծրագրերի մասին խոսելիս հիշատակում է Դենի դը Ռուժմոնի «Սերը եւ Արեւմուտքը» գրքի հայերեն թարգմանությունը եւ «Փաղիշահի խոսող թութակը» Աբդուլ Համիդի եւ «Բանկ օսման» գործողության մասին իր հեղինակած նոր վեպը, որ ամենայն հավանականությամբ լույս կտեսնեն այս տարի:

Հակոբ Ասատրյանի հերթական հարցազրույցը ներկայացնում է ռուսական ռոմանսների կատարումով աչքի ընկած եւ Պրահայում համերգով հանդես եկած հայ-հունական արմատներով երգչուհի Օլգա Ռոգաչովային:

Հանդեսի մի շարք հրապարակումներ (Արծվի Բախչինյան «Լեհաց թագուհու հովանու տակ», «Էլդա Գրինի ժողովածուն չեխերեն» Ալ. Թոփչյան «Թորոսի հաղթանակը Ֆրանսիայում») արդեն տպագրվել են **«Ազգում»**:

«Օրերը» տպագրել է չեխական «Լիդովե Նովինի» օրաթերթի անդրադարձը Չեխիայում գործող «Ազատություն» ռադիոկայանի աշխատակից Աննա Կարապետյանին աշխատանքից հեռացնելու մասին: «Հայ լրագրողը մեղադրում է Ազատություն-Ազատ Եվրոպա ռադիոկայանին աշխատանքից հեռացվելու համար» խորագրով հոդվածը հրապարակել են Յարոսլավ Պլեսլը եւ Մարտին Զվերժինան:

Մ. Ռ.

Ռուսաստանը դեմ է ՄԱԿ-ի ԱԽ-ն «չճշված փաստերով էմոցիոնալ հանրային մենամարտի բեմ» դարձնելուն

Վրացիները ռուսներին մեղադրելով PR են ապահովո՞ւմ

Ռուս-վրացական հարաբերությունները դիտարկման դեռևում հիշեցնում են հայտնի մի հեքիաթ-ոտանավորություն, թե ինչպես հովիվը սարերում մարդկանց անընդհատ խաբում ու օգնություն է կանչում, թե գայլերը հոտից ոչխար են գողանում: Երբ իսկապես գայլերը հոտի հախից գալիս են, հովվին ոչ ոք օգնության չի շտապում:

Խորհրդային Միության փլուզումից հետո Ռուսաստանն ու Վրաստանը նմանօրինակ այնքան «լուրջ ու առճակատվող» վիճակներում են հայտնվել, որ, թերևս, էլ ոչ մի թեմա, միջադեպ կամ իրադարձություն չի արժանանում պահանջվող արձագանքին: Եվ եթե, օրինակ, գինեգորական անորակ արտադրանքի, դրա պատճառաբանությամբ Վրաստանին հասցված հսկայական վնասի առնչությամբ միջազգային հանրությունը բավականին ուշադիր ու աղմկող գտնվեց, ապա «չպայթած արկի» պատմությունը արդեն իսկ չի կարող հավակնել միջազգային կառույցների եւ եվրոպետությունների նման ուշադրությանը:

Վրաստանն այս անգամ մեծապես աշխատում է հենց ուշադրություն գրավել: Եվ եթե ռուսական «լրտեսների» ձերբակալության պարագայում Վրաստանին ցուցաբերված աջակցությունը ուղղակի կարող էր հարավկովկասյան տարածաշրջանում հարեւանների նախանձը շարժել, ապա այս անգամ մի խումբ «համախոհների» փորձագիտական աջակցության առնչությամբ ավելի շուտ փաստվում է Ռուսաստանի դեմ ինչ-որ փաստեր ձեռք բերելուն մասնակից լինելու ցանկությունը:

Ամեն դեպքում, Վրաստանում է արդեն երկրորդ փորձագիտական խումբը՝ կազմված Բրիտանիայի, Էստոնիայի, Լեհաստանի եւ Ֆրանսիայի մասնագետներից՝ կրկին ու կրկին պարզելու, թե ինչ է տեղի ունեցել իրականում օգոստոսի 6-ին Գորիի շրջանում, որտեղ Ցիսելուբանի բնակավայրի մոտակայքում ռումբ էր նետվել անհայտ երկու ինքնաթիռներից: Երկրորդ փորձագիտական խումբը կփորձի նաեւ ճշգրտել, թե ով է հեղինակել այդ «միջադեպը»:

Իսկ մինչ այդ շվեդական, լիտվական, լատվիական եւ ամերիկյան մասնագետներից կազմված առաջին հետազոտական խումբը հայտարարել է, թե Վրաստանի օդային տարածքում օգոստոսի 6-ին հայտնված ինքնաթիռը եկել է Ռուսաստանի կողմից, նետել հակառադարային արկն ու հեռացել նույն՝ Ռուսաստանի ուղղությամբ:

Նախորդ շաբաթավերջին Վրաստանում աշխատեցին նաեւ ռուսական փորձագետները, որոնց եզրակացությունը, բնականաբար, տարմագծորեն տարբերվում է նախորդից: Ռուս փորձագետները պնդում են, թե միջադեպն ավելի շուտ բեմականացում է եղել, ներկայացում, որն, ըստ Ռուսաստանի ԱԳ փոխնախարար Գրիգորի Կարասինի, բնավ էլ չի համապատասխանում Մոսկվայի շահերին եւ շահեկան է նրանց, ովքեր թշնամի են Վրաստանի ու Ռուսաստանի նորմալ եւ գործունակ հարաբերություններին:

Եթե Կարասինի խոսքերին գումարենք նաեւ Վրաստանի արտգործնախարարության հայտարարությունը, թե գուցե ռուսական ինքնաթիռները վրացական օդային տարածքում են հայտնվել հյուսիսկովկասյան տարածաշրջանում զորավարժություններ անցկացնելու ընթացքում, ապա ռուս-վրացական փոխադարձ ռեւերանսներն ավարտված կարելի է համարել: Էլ ոչ մի ռեւերանս, քանի որ ներկա դրությամբ ռուսներն ու վրացիները կրկին վերադարձել են «թշնամու» կերպարին՝ երկկողմ հայտարարելով, թե մյուս կողմը ոչ ամբողջական է ներկայացնում եղած տվյալները, անգամ կեղծում է դրանք:

Խոսքը տվյալ դեպքում ռուսական եւ վրացական ռադարների տվյալների մասին է, որոնցից յուրաքանչյուրն ավելի շուտ որպես կողմերի տեսակետների ապացույց է ներկայացվում, քան ուղղակի ուսումնասիրության ենթակա փաստեր: Վրացական կողմն, ի դեմս պաշտպանության փոխնախարարի, ռուսական կողմի հետ խորհրդավորությունների հնարավորությունները սպառված է համարել, իսկ ռուսների մոտեցումը որակել որպես համագործակցությունից խուսափելու վարքագիծ, ընդգծելով, որ արդեն մնում է սպասել միջազգային հանրության գնահատականին:

Ի պատասխան ռադարների տվյալները կեղծելու վրաց ղեկավարների մեղադրանքների՝ ռուսական կողմն, իր հերթին, կրկնեց նույն մեղադրանքը այն բացատրությամբ, թե օդային տարածքի խախտման առնչությամբ ռմբակոծիչների օդ բարձրացում չի եղել, տագնապ չի հայտարարվել, չկան տվյալներ, թե ինչ համար է ունեցել ռումբը, բացակայում է ռումբի դեպքերի 2/3-ը:

Ինչեւէ, արդեն երեկ Վրաստան է ժամանել ԵԱՀԿ գործող նախագահի հատուկ ներկայացուցիչ Միոմիր Զուզուլան օգոստոսի 6-ի միջադեպի հանգամանքները պարզելու նպատակով: Դեպքի վայր ԵԱՀԿ գործող նախագահի ներկայացուցիչը կմեկնի այսօր: Իսկ մինչ այդ Ռուսաստանը դեմ է արտահայտվում միջազգային կառույցների, հատկապես ՄԱԿ-ի անվտանգության խորհրդում այս միջադեպը քննարկելուն, կարեւորելով, որ որեւէ պետության հասցեին մեղադրանքները բավականին լուրջ են ու հենց լուրջ մոտեցման կարժանանան, իսկ փորձագիտական խմբերի «հարցատ» եզրակացություններն էլ բնավ չեն նպաստում տարածաշրջանում երկխոսության կայացմանը:

Իսկ թե որքանով են ռուս-վրացական հարաբերություններում տարբեր «միջադեպերը» պայմանավորված հարավօսական կամ աբխազական հակամարտությունների իրավիճակով, ուղղակի ակնհայտ է Ռուսաստանի փոխարտգործնախարար Գրեգորի Կարասինի խոսքերից. «Ռուսաստանը հետաքրքրված չէ Վրաստանում անկայուն վիճակով: Օգոստոսի 6-ի միջադեպի շուրջը սարքվող իրավիճակը շահեկան է Մոսկվայի ու Թբիլիսիի նորմալ ու գործունակ հարաբերությունների թշնամիներին, ովքեր չեն ցանկանում Հարավային Օսիայի եւ Աբխազիայի խնդիրների խաղաղ կարգավորման գործընթացի առաջընթացը»:

ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«Քրդերն ունեն «թուրքենական», իսկ քուրդ ալավիները՝ «հայկական» ծագում»

Հայտարարում է Թուրքական պատմական ընկերության նախագահի Հալաչօղլուն

Մասնակցելով «Ավշարները թուրքերի պատմության մեջ եւ մշակույթում» թեմայով Կեսարիայում կազմակերպված «միջազգային» գիտաժողովին, Թուրքական պատմական ընկերության նախագահ Յուսուֆ Հալաչօղլուն անդրադարձել է քրդերի եւ քուրդ ալավիների ծագումնաբանությանը: Տեղեկացնելով այդ մասին օգոստոսի 20-ի համարում, «Վաքան» թերթը նշում է, որ միջազգային այս գիտաժողովին մասնակցել են ավշարներն ինչպես Կեսարիո շրջակա նահանգներից, այնպես էլ միջին Ասիայի թուրքալեզու հանրապետություններից:

Հալաչօղլուն ելույթում ընդգծել է Թուրքիայի բնակչության բազմաէթնիկ բնույթը եւ քաղաքացիներին նկատմամբ խտրականությունը դիտարկել է որպես մասնատման սպառնալիք երկրի համար: Բայց եւ այնպես նա անհրաժեշտություն է համարել երկրի առանձին խմբավորումների էթնիկ ծագման իմացությունը եւ ավելացրել. «Անատոլիայում բնակություն են հաստատել նրանք, ովքեր մահմեդականություն էին ընդունել եւ իրենց թուրք էին համարում: Հետեւաբար, նրանց իբրեւ խճանկարի մասնիկ դիտարկելը պատճառ է դառնում միջէթնիկ բեւեռացումների: Այս հարցում հատկապես ուշադիր պետք է լինեն քաղաքական գործիչները: Ուսումնասիրությունների արդյունքում պարզել են, որ նրանք, ովքեր հայտնի են որպես «քուրդ», իրականում ունեն «թուրքենական» ծագում, իսկ «քուրդ ալավիներ» կոչվող մեր մյուս քաղաքացիները՝ «հայկական»: TIKKO-ի եւ PKK-ի պես ահաբեկչական կազմակերպությունների շարքերում, որոնք ձգտում են մասնատել երկիրը, մեծ թիվ են կազմում քրդացած հայերը: Այս կազմակերպությունների գործունեությունը, հակառակ ենթադրությունների, որեւէ առնչություն չունի քրդական շարժման հետ»:

Հալաչօղլուի այս հայտարարությունը ենթադրել են մի շարք թուրք պատմաբաններ, նրանք, ովքեր աշխատում են այն ընկերությունում, որի նախագահն է ինքը եւ պահանջել են, որ նա հրաժարական տա Թուրքական պատմական ընկերության նախագահի պաշտոնից: Գիտակցությունից զուրկ այս հայտարարության համար նրան խստագույնս դատապարտել են քրդական «Դեմոկրատական հասարակարգ» կուսակցության ղեկավարներն ու Թուրքիայի ալավիական կազմակերպությունները, պահանջելով Հալաչօղլուին անհապաղ ազատել զբաղեցրած պաշտոնից՝ սկսելու համար նրա դեմ խորհրդարանական հետաքննություն: Պահանջի համար, «Ռադիկալի» վկայությամբ, հիմք են ծառայել Թուրքական պատմական ընկերության նախագահի հակագիտական մոտեցումներն ու ծայրահեղ ազգայնամոլ հայացքները:

Հ. ՉԱԲԲԱՐ

«Ալ Ղահդան» հորդորում է սպանել Բեքհեմին, Ռունիին եւ Անրիին

«Ալ Ղահդայի» գրոհայինները ծայրահեղականների կայքէջերից մեկում զետեղել են տեսահոլովակ, որով կոչ են անում սպանել ֆուտբոլային աստղեր Դեվիդ Բեքհեմին, Ուեյն Ռունիին եւ Թիերի Անրիին: Նրանք բնութագրվում են որպես «չարիքի մարմնացում» եւ «երիտասարդ մահմեդականների վրա կործանարար ազդեցություն ունեցող» անձինք:

«The News of the World» թերթը տեղեկացնում է, որ տեսահոլովակում Անգլիայի հավաքականի եւ «Մանչեսթր յունայթեդի» հարձակվող Ուեյն Ռունիի պատկերի տակ մակագրված է. «Ինչո՞ւ ես դու սիրում սրիկաներին»:

Մադրիդի «Ռեալից» վերջերս ամերիկյան «Լոս Անջելես գելաքսի» տեղափոխված անգլիացի Դեվիդ Բեքհեմի լուսանկարի տակ հետեւյալ հարցն է. «Դու ինչ ես անում անհաջողակների մեջ»:

«Արսենալի» նախկին հարձակվող, ներկայումս «Բարսելոնում» հանդես եկող ֆրանսիացի Թիերի Անրիի նկարն ուղեկցվում է «Ինչո՞ւ ես կիրք նմանակում» մակագրությամբ:

Տեսահոլովակը կոչ է անում սպանել նաեւ ամերիկացի երգիչներ Փի Դիդդիին եւ Ջաստին Թիմբերլեյքին: Որպես տեսահոլովակի նվագակցություն ընտրված է իսլամիստ արմատական քարոզիչ Օմար Բաքրի Մոհամմեդի օգտագործած երաժշտությունը:

Պ. Ք.

Ֆրանսիայի արտգործնախարարի իրաքյան այցը խորհրդանշական է

Ֆրանսիայի արտգործնախարար Բեռնար Կուշները պատշգամբային այցով երեկվանից Իրաքի մայրաքաղաք Բաղդադում է: Ժամանելուց հետո լրագրողներին տված հարցազրույցում Կուշներն ասել է, որ նախագահ Ջալալ Թալաբանիի հրավերով ինքն Իրաք է եկել «համերաշխության ազդանշան» տալու:

BBC-ն մեջբերում է Ֆրանսիայի ԱԳՆ հայտարարության այն մասը, ըստ որի «Բեռնար Կուշները Բաղդադ է մեկնել Իրաքի ժողովրդի հետ իր համերաշխությունը ցուցադրելու եւ բոլոր խմբակցությունների ներկայացուցիչներին լսելու նպատակով»:

Օրերս Իրաքում անձնասպանական ահաբեկչությունների հետեւանքով զոհվել էր մոտ 200 մարդ: Ցորտարի առաջ Բաղդադում ՄԱԿ-ի ներկայացուցչության շենքի պայթեցումից զոհվել էր ներկայացուցիչ Սերժիո Վիեյրա դե Մելլոն՝ Բեռնար Կուշների բարեկամներից մեկը:

Մեկնաբաններից շատերի կարծիքով, Կուշների իրաքյան այցը խորհրդանշական քայլ է եւ հուշում է, որ Ֆրանսիայի նախագահ Նիկոլա Սարկոզին մտադիր է Իրաքի հարցում փոխել իր նախորդի՝ նախագահ Ժակ Շիրակի վարած քաղաքականությունը:

ԱՄՆ նախագահ Ջորջ Բուշի հետ անցյալ շաբաթ վարած ոչ պաշտոնական բանակցությունների ժամանակ Սարկոզին արդեն հայտարարել էր, որ ամերիկացիները կարող են հույս դնել Ֆրանսիայի բարեկամության վրա: Սարկոզին ԱՄՆ-ում արձակուրդն անցկացրած Ֆրանսիացի առաջին նախագահն է: **«Ազգի»** շաբաթօրյա համարում մեջբերված է լրագրողներին Սարկոզիի արած այն հայտարարությունը, թե «Ֆրանսիան վերադառնում է ԱՄՆ»:

Մեկնաբանելով Սարկոզիի ամերիկյան արձակուրդը եւ Ջորջ Բուշի հայրենակալվածքում նրա հետ ունեցած ոչ պաշտոնական հանդիպումը, վերլուծաբաններն ընդգծում են, որ Իրաքի պատերազմը խստիվ ենթադրած ժակ Շիրակը դժվար թե համաձայներ նման հանդիպում ունենալ եւ մանավանդ նման հայտարարություններ անել:

Մոսկվան դադարեցրել է BBC-ի հաղորդումները գերկարճ ալիքով

Բրիտանական գլխավոր թերթերը հաղորդում են, որ մոսկովյան «Բոլշոյե ռադիո» ռադիոկայանի եթերում շաբաթավերջին դադարեցվել են BBC-ի ռուսերեն հաղորդումները գերկարճ ալիքով: Լրագրողներն այս իրավիճակը գնահատում են որպես ռուս-բրիտանական հարաբերությունների վատթարացման հերթական փուլ:

«Կրեմլը BBC-ին վռնդում է եթերից» հրապարակման մեջ «Թայմս» թերթի դիվանագիտական խմբագիր Ռիչարդ Բիստոնը գրում է, որ ռուս-բրիտանական հարաբերություններում լարվածությունը խորացել է «օտարերկրյա քարոզչության» մեղադրանքով BBC-ի մոսկովյան հեռարձակման դադարեցումից հետո:

«Բոլշոյե ռադիոյի» նոր սեփականատեր «Ֆինամ» ընկերության ներկայացուցիչն այս կապակցությամբ հայտարարել է. «Կառավարության՝ Ռուսաստանի, Մեծ Բրիտանիայի, Գերմանիայի կամ ԱՄՆ-ի կողմից ֆինանսավորվող ամեն մի լրատվամիջոց քարոզչություն է»:

«Թայմսը» գերկարճ ալիքով BBC-ի ռուսերեն հաղորդումների հեռարձակումը դադարեցնելու Մոսկվայի իշխանությունների պահանջը անվանում է «սառը պատերազմի արձագանք, երբ ԽՍՀՄ-ը խլացնում էր BBC-ի հաղորդումները»:

Բրիտանական մամուլը Մոսկվայի գործողությունները հերթական պատժիչ քայլն է համարում Լոնդոնում ԱՈԾ նախկին սպա Ալեքսանդր Լիտվինենկոյի սպանության առաջացրած ռուս-բրիտանական հակամարտության խորացման ուղղությամբ: Մոսկվայում BBC-ի հեռարձակման արգելումը գնահատվում է նաեւ որպես Ռուսաստանում խոսքի ազատության սահմանափակումների հերթական դրսեւորում:

Պ. Ք.

Մշակույթ

Գույնի մայրամուտը

Հեռացավ Էդվարդ Իսաբեկյանը



Հայ գեղանկարչության նահապետը կյանքի վերջին տարիներն ու օրերն ապրեց Աշտարակի իր առանձնատանը: Մի քաց աշնան օր գնացի այցելության վարպետին, հարցազրույց պիտի անեի. ծննդյան 90-ամյակն էր մոտենում: Ընդունված է՝ այդպես հանդիսավոր հոբելյանական պահեր ստեղծել, արձանագրել. պատշաճ է՝ հիշել վաստակը, մարդու գործը մեկ անգամ եւս արժեւորել: Անտեղի լարվածություն չֆացավ առաջ: Ամեն ինչ այնքան բնական էր, ինչպես կյանքն ինքն է:

Ցնայած տարիքին՝ փառահեղ տեսք ուներ Էդվարդ Իսաբեկյանը, դժվար էր հավատալ, որ աչխարհի գույներն այլեւս անհաղորդ են իրեն եւ ոչինչ չեն ասում: Գույները սուզվել էին իր ներսը, աչքերի հատակը: Մենակ էր. երկար զրուցեցինք, ամեն ինչի մասին՝ կյանքի, մարդու հոգս ու ցավի, մանկությունից, իր ծննդավայր Իգդիրից, իրենց տուն ու այգուց: Հրաշալի պատմող էր, խոսքի մեջ ժողովրդական խոր իմաստնությամբ, պատումի էպիկականությամբ:

Երկար ժամանակ է՝ չէր նկարում ու դրանից խորապես տառապում էր: Ասում էր. «Պարապ չեմ եղել երբեք, միշտ կամ նկարել եմ, կամ գրել, հիմա դատապարտված եմ: Ամսորվածի նման եմ ինձ զգում»: Ծանր էր տանում իր վիճակը՝ «Տեսնում ես ինչ պաշիժ է: Աչխարհ տեսած կույր եմ»: Աչքերը գրեթե չէին տեսնում, իսկ մենակությունն իր համար չէր: Իգդիրցու խոհքս նկարագիր ուներ՝ պինդ, հատատակամ, երբեմն կոպտության ասպիճան համառ, երկրի ջիղը՝ ամուր նստած երակներում: Սիրում էր կյանքի վայելքը, լավ գինի, կանայք ու շատ էլ նկարում էր նրանց: ... Հիմա սրտնեղած էր, ոչ միայն իր վիճակից, այլեւ աչխարհի անարդարությունից, մարդու չարությունից: Ասում էր՝ «Էսօրվա համար ինչ լավ բան ասես, երբ գյուղացին հողից երես է թեքել»: Իր մենակության գույները ներսում թանձրանում, կուտակվում ու զայրույթի էին վերածվում, չէր սիրում խեղճություն ու անտարբերություն: Տարիներ առաջ գրեց «Իգդիր» վեպը՝ հյութեղ լեզվով, ժողովրդի նիստ ու կացի, ապրուստի պատկերավոր նկարագրություններով, գունային արտահայտչականությամբ: Իր կտավների մեջ հիշողությունների ոգին էր, որ խոսում էր, գաղթական հոգու խեղճության նշույլ իսկ չկար: Հակառակը՝ ընդարոս հոգու պոռթկում, անսանձ կիրք, էպիկական շունչ ու դինամիզմ: Կերպարային իր տարերը հերոսականությունն էր՝ անհնազանդ պայքարը, իսկ թեմատիկ կոմպոզիցիաներում ազգային հայրենասիրական պաթոսն էր իշխում: Մինչեւ ոտն ու ծուծը հայ մարդ էր, Հայկի ցեղից սերված, հպարտ, առնական, խորապես ազգային՝ եւ իբրեւ մտավորական եւ իբրեւ պարզ մարդ:

Նկարչության մեջ չէր ընդունում ձեւի դոմինանտությունը, իգմերի պարտադրվածությունը, ամենաճշմարիտը համարում էր ռեալիստական-ռոմանտիկական արվեստը՝ Ռուբենս, Վելասկես: Ասում էր. «Աչխարհում վեց գույն կա, սեւ առարկա կա, բայց գույն չկա»: Երեւի չէր սիրում սեւը: Իմպրեսիոնիստներից հետո գրեթե ոչ մեկին չէր ընդունում: Պաշտամունքի ասպիճան սեր ուներ Կլոդ Մոնեի, Մանեի, Պիսարոյի, Ռենուարի հանդեպ, որոնք դեպի բնական լույսը, լուսավորությունը գնացին: «Արեւի տակ ամեն ինչ մարվում է»: Արեւ էր սիրում, մեջն այնքան ջերմություն կար: Տխրեց, երբ վեր կացա: «Մեկ-մեկ արի զուգ անենք», ասաց: Սեղանին խնձորներ կային՝ իր այգուց: Տանը սպասող կնոջն ասաց. «Էդ խնձորները դիր, թող տանի»: Անձրեւը շարունակում էր թրջել օրը: Մեքենան շարժվեց, նկարչի կերպարն աղոտացավ. մեջս մնաց ծերունազարդ մարդը՝ կողին հավատարիմ շունը:

Մի քանի օր անց Թեքեյան մշակութային միությունը շտապով նշեց վարպետի հոբելյանը: Նստած էր թեքեւակի գլխիկոր, հայացքը՝ ցած: Միության կողմից պարգեւատրվեց «Ադամանդակոտ Արարատ», կրթության նախարարության կողմից՝ «Ոսկե» մեդալներով: Հիշում եմ՝ երեկոն երբ ավարտվեց, ինչ սիրով ու գորովով էր զրուցում իրեն շրջապատող յուտաանչյոտի հետ, ուզում էր վերհիշել ամենին: Մեջը կարոտն էր խոսում:

Էդվարդ Իսաբեկյանի մահվան լուրը լսելուց հետո խմբագրական մի անկյունում մահվան մասին խոհեր սկսվեցին: Ինչո՞ւ է մեզ տանջում այս կյանքը, մտքերը, առանց հրավերի, գալիս, ասեղում են ներսդ: «Չեմ մտածում դրա մասին, կա-չկա, միեւնույն է», ասաց առաջացած տարիքով արձակագիրը: «Ինքն է մեր մասին մտածում», թռան խոսքերս: Մտահոգ մի մտավորական զանգեց խմբագրատուն. «Ինչ ես, ասաց իրեն բնորոշ, մտերիկ տոնով: Այս ո՞ր եք հերթով ճանապարհում գույնի մեր վարպետներին», վշտակցությունն այստեղ հայտնեց:

Հայ գեղանկարչության նահապետը կարծես շատրեց, որ մեր աչքից հեռու, անտեսանելի մի ճամփին հանդիպի Ռոտլֆ խաչատրյանին՝ ասես կշտամբելու, թե ինչու կանխեց իրեն:

Էդվարդ Իսաբեկյանը մահացավ տաք ամռան մի օր, արեւալույսին, առավոտյան: Ինձ թվում է, չնայած 93 տարեկան էր վարպետը, բայց հեռացավ Կարոտի գույնը աչքերում:

ՄԵԼՈՒՀԱՆ ԲԱԴԱԼՅԱՆ

ԼՈՒՅՍ Է ՏԵՍԵԼ

Բերբերյանը սիրո եւ փողի շուկաներում

Հինգ տարի առաջ իր առաջին՝ «Հեծանվորդը» (The cyclist) վեպով ամերիկացի գրաքննադատների ուշադրությանն արժանացավ ամերիկահայ գրող Վիգեն Բերբերյանը: Երիտասարդ ահաբեկչի մասին գիրքը անմիջապես գրավեց ընթերցողներին:

Այժմ, ըստ «Արմինյն միրոր սփեֆթեյթր» շաբաթաթերթի, Բերբերյանը հրապարակ է հանել իր երկրորդ հատորը, որը վերնագրել է «Կապիտալ: Վեպ սիրո եւ փողի շուկաների մասին» (Das kapital: A Novel of Love and Money Markets): Օգտագործելով Մարքսի հանրահայտ հատորը որպես ցատկահենարան, նա «թրիլլեր» ոճի սատիրական մի վեպ է ստեղծել կապիտալիզմի գերարդիական ոլորտներում ապրող կերպարների մասին, որոնցից մեկը՝ Ուեյնը պատեհապաշտ բորսային մակլեր է, իսկ մյուսը՝ մի կորսիկացի, որին Ուեյնը վարձում է եւ հանձնարարում սպանել աչխարհի ղեկավարներին, որպեսզի ինքը կարողանա տնտեսական շուկան տնօրինել իր հայեցողությամբ, հոգուս իրեն:

«Ընտրել եմ կորսիկացուն, որովհետեւ նրանք շարունակում են ապրել փակ, ներքին կյանքով, դիմադրելով արդիականությունն եւ գլոբալիզացիա անվան տակ աչխարհին պարտադրվող մտադրությունները», ասել է հեղինակը «Հարվարդ կոոպ բոմստորում» իր գրքի շնորհանդեսի ժամանակ, անկեղծ շնորհակալություններ հայտնելով խմբագրին, որն աչխարհին «նայում է ոչ սովորական աչքերով»:

Հեղինակի նոր հատորը, որը նա գրել է Փարիզում, Մարսելում եւ Նյու Յորքում, արդեն իսկ դրական գնահատականներ է ստացել: «Կապիտալը» արարչական եւ զարմանալիորեն խռովահույզ վեպ է, որտեղ նրա սատիրան հասնում է Դոն Դելիլոյի եւ Չարլ Պալանյուկի մակարդակի», գրել է «Սան Ֆրանցիսկո քրոնիքլ» թերթը:

Հ. Ծ.

Ժեխ շուկայից դեպի պարզկա օազիս

«Շանթի» ժողովրդական երգիչները մաքրում են մեզ

Մինչ «Ժողովրդական երգիչ» մրցույթի լուսն առնելը, մինչ «Շանթ» հեռուստաընկերության պատշաճական հայտարարությունը մրցույթի մասին, ես, ինչպես յուտաանչյոտ օրինավոր հայ մարդ, որ անտարբեր չէ իր ժողովրդին ու երկրին վերաբերող ոչ մի իրադարձության նկատմամբ, որ նախանձախնդիր է հատկապես ու սրտացավ մեր ազգային արվեստի, հոգեւոր-մշակութային առատական արժեքների պահպանման չափազանց կարեւորագույն խնդրում, - ապրում էի ու շարունակում եմ ապրել տագնապով: Օրեցօր մեր ոսկեդենիկ արժեքները իրենց բազմաթիվ գոհարանմուշներով հանդերձ, ի ցավ եւ համոթ մեր բիբլիական ազգի, Հայք-Հայաստան օրհնյալ անունը կող երկրի, ազատություն ստացած ու ոգեւորված-դրամատենչ, ազգապատկանելությունից զուրկ, վուլգարագրեթիկ լկտիաբանության ջատագովների «ստեղծագործական» բոտն ջանքերի պատճառով ավելի ու ավելի են տոհվում, վոնդվում ասպարեզից ու դեն շպրտվում: Դրանք անտեր ու անօգնական, իրենց տեղը գլխիկոր զիջում օտարախորթ, այլահունչ ու այլանդակ, հակահայկական, մեր ազգագրությունն ու երգարվեստը աղականող բռնի պատվաստումներին, որ, ինչպես ամեն մի պարազիտաբնույթ արագաաճ եղծաբանություն, իր զավթիչ հնքնությունը հաստատելու համար իսկույն շուլալվում է անաղարտ-արմատականի, հայրենի-նվիրականի պարանոցը մինչ ու համբույրներ տեղալով խեղդում:

Այս պատկերը այսօր առավել եւ ընդգծված-ողբերգական է հայ գուսանական-ժողովրդական երգի ապարեզում: Իսկ առհասարակ, առանց ժանրային զատումների, մեր արդի երգարվեստը նման է փակ տարածության մեջ մոնոտոն ճչացող ու պատեպատ զարկզարկվող այն թռչնին, որ այդպես էլ չի կարողանում լայն բացել իր թեւերը, որպեսզի դուրս թռչի վերջապես ու հասնի իր ճախրումին ու սավառնումին:

«Ժողովրդական երգիչ» մրցույթի գաղափարը առաջին պահին ընկալեցի ճաշակաքիմիս տակ արդեն վաղուց բնված ու կուտակված դառնազգացողության ուղեկցությամբ եւ չկարողացա պատկերացնել՝ ի վիճակի կլինե՞մ, ուժ կգտնե՞մ արդյոք, ականջներս էլի մի անգամ հոտոտումի փորձության ենթարկելով, անհույս նստել հերոսաբար ու դարձյալ լսել՝ մեր մայրենի լեզուն խոշտանգող, այդ կլկլոցա-գալարադայլայլահունչ, սրտաճմլիկ, ուղեղի բորբոքում առաջացնող կատարումները, որոնցով եւ ձայնագրություններով նրանց այսօր համատարած հեղեղված է մեր մի բուռ մնացած՝ վճիտ, հանճարեղ տաղերի ու շարականների եւ գուսանական-ժողովրդական անզուգական երգերի երկիր Հայաստանը: Աղարտման պատկերը լրացնում են՝ հակադաստիարակչական, սերունդ պղծող, ճաշակազուրկ, խեղկատակաղեմ գովազդային հոլովակները եւ, ուրախ-ժամանցային իբրեւ, գոռեկաբանությամբ եւ խաղեցիությամբ բթված խստմնելի հաղորդումները:

Ու... մեկընդմեջ հետեւում էի, լսում «Ժողովրդական երգիչ» մրցույթի մաղման փուլի հեռուստատեսությամբ հրամցվող պատառիկները եւ մնում թերահավաս: Սակայն երբ մնացին խանութը ու մինչ եզրափակիչ դուրս կգային տասնչորս լավագույնները, ընթացքում՝ անսպասելիի հեղակարծությամբ զարմացած սկսեցի զուլալ ձայներ լսել, երես չառած ու չլկսված, մեծամտության ու ամբարտավանության ներարկումներից մազապուրծ, զուարթ, հուզումնադող ու ամոթխած, ջինջ աչքերով-հայացքներով աղջիկներ ու տղաներ տեսա եւ, որ ամենակարեւորն է, նրանց անկեղծ, ինքնաբուխ-շառագունած սերն ու նվիրումն զգացի գուսանական-ժողովրդական երգի հանդեպ:

Որտեղի՞ց հայտնվեցին, տեր Աստված... Օրհնյալ թող մնա միշտ զավակատունդ, երկիր հայոց:

Ու երբ սպասումի թրթռով արդեն, առաջին մրցահամերգից առաջ, համակ ուշադրություն դարձած, հոգուս առագաստը հանդիսավոր պարզեցի դեպի «Շանթ» հեռուստաընկերություն, համերգն սկսվելուց հետո ապշեցանաբար զգացի, որ օտարախաղ ալիքների մեջ նավարկելու դատապարտված պանդուխտս վերջապես, երգից-երգ, հայրենիք եմ վերադառնում...

Ես ժեխ-սինլեռային շուկայից հայտնվեցի մի զուլ ու պարզկա օազիսի մեջ:

Վերջին երկու տասնամյակների ընթացքում մի անգամ չէ, որ այս կամ այն երեւույթը, իրադարձությունը ազգային վերածնունդ ենք համարել, սակայն որոշ ժամանակ անց փոխել ենք մեր կարծիքը... Եվ հիմա, հանձին «Ժողովրդական երգիչ» մրցույթ-երեւույթ-իրադարձության, անզուսպ հրճվանքով ու համարձակությամբ ուզում եմ բացականչել՝ ահա մեր խիստ անհրաժեշտ վերածննդի, զարթոնքի սկիզբը, մեր առատական, կարեւորագույն արժեքներից մեկի, թեկուզեւ ուշացած, սակայն հուսալի վերադարձով:

Այն էլ ինչպես եմ հասկանում ժյուրիի անդամներին... Հիրավի հնարավոր չէ գնահատել եւ ընտրություն կատարել... ինչպե՞ս, երբ միակ թերությունը ավելորդ հուզմունքն է եւ փորձի պակասը: Ժյուրիին, մասնագետներին, երաժիշտներին, կազմակերպիչներին՝ կեցցեք, եւ սա այն դեպքն է, որ սրտանց ուզում եմ ասել՝ հալալ լինի ձեր կերած հացը, -ես ավելի թափանցիկ-լուսեղեն մրցույթ չեմ տեսել:

Իսկ մրցող-մասնակից իմ պատանի-երիտասարդ բարեկամներին՝ սիրելիներս, մնացեք այնպիսին, ինչպիսին կա՛ք մաքուր ու զուլալ, եւ անվերջ սովորելու-կատարելագործվելու երկար ճանապարհը, որ տեւելու է ձեր ստեղծագործական կյանքի վերջին վայրկյանը մինչեւ, անցե՛ք պահպանելով ա՛յն անաղարտությամբ, որով մրցապարեզ մտա՛ք: Որովհետեւ մեր գուսանական-ժողովրդական երգը՝ ինքը բյուրեղն է, մաքրամաքուրը եւ յուտաանչյոտ շեղում, աղավաղում՝ դավաճանություն է, սրբապղծություն նրա նկատմամբ:

Շուտով, իմ ցանկությունն է, շատերդ բեմահարթակներ կբարձրանա՛ք ու թե հավատարիմ մնա՛ք մաքությանը եւ չշտապե՛ք, չշտապե՛ք ասող դառնալ, վայրկյան անգամ չեմ կասկածում, որ համերգից-համերգ, կատարումից-կատարում փորձն ու վարպետությունը սիրով կգան ընդառաջ եւ դուք, բազում, բազում սրտեր կնվաճե՛ք: Անհուն ու անսպառ աչխատասիրություն եւ համբերանք ձեզ: Եվ հիշե՛ք դառնալ ասող՝ ամենեփին էլ չի նշանակում լինել մեծություն: Ուր ասողներ են հավաքվում շատ, այն էլ վաղափանչ, այնտեղ ասողաճիճ է գոյանում...

Գուսանական-ժողովրդական երգը մեր ինքնուրույն, ինքնաչխարհ գոյի եւ երկարակեցության հզոր հիմնաքարերից մեկն է, դարեդար մեզ ուղեկցող մեր ստեղծագործ ժողովրդի ու նրա մեծագույն վարպետ-զավակների սերն ու օրհնանքը, մեր չվաճառվող ու վարձով չտրվող ազգային այն հարստությունն է, որ հանապազօրյա հաց ու ջրի նման, կենսականության խորհուրդը, ավյունն է պարունակում իր մեջ:

Խորապես համոզված եմ՝ «Ժողովրդական երգիչ» մրցույթը շարունակական է լինելու: Սակայն հուսով եմ եւ առավելեւս ուզում եմ համոզված լինել, որ այն իր բաղադրությամբ եւ ոգեշնչումով պիտի կարողանա ազատագրել եւ այս, եւ հաջորդ սերնդի արյունը...

Սիրով ու հավատով՝ ձեր

ԲԵՐԴ ԲԱԲԱՅԱՆ

Արթուր Աբրահամի չեմպիոնական վեցերորդ բարձունքը

«Ներհայկական» մենամարտ գերմանական ռինգում



Միջին խաչում IBF-ի վարկածով աշխարհի չեմպիոն Արթուր Աբրահամը հերթական՝ 6-րդ անգամ հաջողությամբ պաշտպանեց ուժեղագույնի կոչումը: Շաբաթ օրը Բեռլինում կայացած մենամարտի 11-րդ ռաունդում նա նոկաուտի ենթարկեց իր հայրենակից խորեն Գետորին: Վերջինս գլխուղեղի ծանր վնասվածք է ստացել ու տեղափոխվել հիվանդանոց: Գերմանական մամուլը դրանում մեղադրել է մրցավարներին, գտնելով, որ դեռեւ 8-րդ ռաունդում նրանք պարտավոր էին դադարեցնել մենամարտը եւ հաղթանակ շնորհել Աբրահամին: Պրոֆեսիոնալ բոքսամարտի պատմության մեջ առաջին անգամ Գերմանիայում աշխարհի չեմպիոնի տիտղոսի համար մրցավեճի բռնվեցին երկու հայ բոքսամարտիկներ: Բնականաբար, այդ մենամարտում մասնագետները աղթողի հավակնող էին համարում Արթուր Աբրահամին եւ նա հերթական անգամ արդարացրեց երկրպագուների սպասելիքները: Արթուրը պրոֆեսիոնալ ռինգում 24-րդ հաղթանակը տոնեց, որից 19-ը՝ նոկաուտով: Նա առայժմ անպարտելի է: Այդ մենամարտը նաեւ երկու հանրահայտ գերմանացի մարզիչների՝ Ուլի Վեգների (Աբրահամի մարզիչը) եւ Ֆրից Զդունեկի յուրօրինակ մրցավեճ էր:

Արթուր Աբրահամը պրոֆեսիոնալ բոքսամարտում միջին խաչում ամենաաղանդավոր բոքսամարտիկներից մեկն է: 5 տարի առաջ տեղափոխվելով պրոֆեսիոնալ բոքսամարտ, նա բոլորին հիացնում է իր մարտարվեստով: Նրա նոքաուտը պրոֆեսիոնալ ռինգում շատ տպավորիչ ստացվեց: 2003 թ. օգոստոսի 16-ին Աբրահամն արդեն 3-րդ ռաունդում նոկաուտի ենթարկեց գերմանացի բոքսամարտիկ Ֆրանկ Կարի Ռոտին: 2005 թ. դեկտեմբերի 10-ին հայ բոքսամարտիկը նվաճեց աշխարհի չեմպիոնի տիտղոսը՝ հաղթելով նիգերիացի Կինգալի Իկեկեին: Հաջորդ տարի Արթուրը 3 անգամ հաջողությամբ պաշտպանեց ուժեղագույնի իր տիտղոսը՝ հաջորդաբար պարտության մատնելով Շենան Թեյլորին, Կոֆի Յանտոային եւ Էդիսոն Միրանդային: Վերջին մենամարտում Աբրահամը ծանր վնասվածք ստացավ, որից ապաքինվելուց հետո եւ մեկ անգամ հաջողությամբ պաշտպանեց իր կոչումը՝ տեխնիկական նոկաուտով արդեն 3-րդ ռաունդում ստիպելով անձնատուր լինել կանադացի Սեբաստիան Դեմերսին:

«Ես հիանալի մարզավիճակում եմ եւ դա կարացուցեմ մենամարտում: Մշտապես ինքս ինձ ասում եմ, որ մրցակցից թույլ եմ, ուստի շատ լրջորեն եմ մարզվում եւ հակառակորդիս հաղթում եմ»,- նշել էր Աբրահամը մենամարտից առաջ կայացած մամուլի ասուլիսում:

Բայց խորեն Գետորն էլ բավական վստահ էր ուժերին. «Հաղթելու լավ հնարավորություններ ունեմ: Բավական ուժեղ մրցակիցների հետ եմ մարզումներ անցկացրել: IBF-ի վարկածով աշխարհի չեմպիոնի տիտղոսը լավ նվեր կլինի կնոջս՝ Նինելին, որը շուտով ծննդաբերելու է»:

Խորեն Գետորի մարզիչ Ֆրից Զդունեկը եւս մենամարտից առաջ լավատեսորեն էր տրամադրված. «Հատկանում եմ, որ շատերը Աբրահամին են համարում հաղթողի հիմնական հավակնորդ: Սակայն հավակնորդներն էլ պարտվում են: Կարծում եմ, որ մենամարտը կտեւի 12 ռաունդ եւ խորենը հաղթանակ կտանի շնորհիվ ֆիզիկական գերազանց պատրաստության»:

Հարկ է խոստովանել, որ մարզիչը լավատեսության հիմքեր ուներ: Սիրողական բոքսամարտում նախկին էջմիածնեցի մարզիկը 75 մենամարտերից 72-ում հաղթանակներ էր տարել: 2000 թ. 28-ամյա բոքսամարտիկը տեղափոխվեց պրոֆեսիոնալ ռինգ: Այդ ընթացքում խորեն Գետորը դարձավ WBO-ի եւ IBF-ի վարկածով միջմայրցամաքային տիտղոսի դափնեկիր: Իսկ ներկայում նա IBF-ի վարկանիշային ցուցակում 5-րդ պատվավոր տեղում է, ինչն էլ հնարավորություն ընձեռեց հայ բոքսամարտիկին ձեռնոց նետել իր անվանի հայրենակցին:

Հերթական մենամարտից հետո Աբրահամի մենեջեր Վիլֆրեդ Զաուերլանդը տեղեկացրել է, որ մտադիր է Արթուրի հաջորդ մենամարտը կազմակերպել ԱՄՆ-ում, որտեղ վերջինս արդեն բավական հայտնի է շնորհիվ Կոլումբիացի Էդիսոն Միրանդայի նկատմամբ տարած հաղթանակի:

Համահայկական 4-րդ խաղերի մեկնարկը տրված է

Օգոստոսի 18-ին Վազգեն Սարգսյանի անվան «Հանրապետական» մարզադաշտում տեղի ունեցավ Համահայկական 4-րդ խաղերի բացման հանդիսավոր արարողությունը, որն ուղեկցվեց շքեղ հրավառությամբ, երգ-երաժշտությամբ՝ հաճելի մթնոլորտ ստեղծելով տրիբունաներում:

Համահայկական 4-րդ խաղերին մասնակցում են ռեկորդային թվով մարզիկներ՝ 94 խաղաթերի 2500 ներկայացուցիչներ, որոնք այդ օրը մարզական հագուստներով շքերթի դուրս եկել: Այն գլխավորում էր Սթենֆի մարզական պատվիրակությունը: Ավանդույթի համաձայն, մասնակիցների շքերթը եզրափակեցին Երեւանի մարզիկները: Տրիբունաները մեծ ոգեւորությամբ ու ծափահարություններով էին դիմավորում մարզադաշտ մտնող յուրաքանչյուր մարզական պատվիրակությանը: Այնուհետեւ մարզադաշտ բերվեց Համահայկական 4-րդ խաղերի դրոշը:

Եվ ահա հանդիսավոր պահը. մոտոցիկլիստների ուղեկցությամբ մարզադաշտ է բերվում Գառնիի հեթանոսական տաճարում վառված ջահը, որը Երեւան էր հասել մարզիկների փոխանցումավազքով: Կրակը վառելու պատիվը տրվել էր օլիմպիական խաղերի չեմպիոն, հրաձիգ Հրաչյա Պետիկյանին:

Խոսքը տրվում է ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանին. «Հարգելի հայրենակիցներ, մարզիկներ, մարզիչներ եւ մրցավարներ: Ուրանց ողջունում եմ բոլորիդ համայն հայության մայրաքաղաք Երեւանում, Համահայկական 4-րդ խաղերի առիթով: Համահայկական խաղերի անցկացումը մեր նորագույն պատմության լավագույն ավանդույթներից է: Այն իր մեջ ներառում է մեր ազգային միասնության ոգին, արդար մրցակցությունը եւ առողջ ապրելակերպը: Այն դարձել է աշխարհի հայ երիտասարդության միասնականության տոն: Վստահ եմ, որ Հայաստանում գտնվելու ընթացքում մասնակիցները ձեռք կբերեն բազմաթիվ ընկերներ, կհասցնեն այցելել հանրապետության հիշարժան վայրեր, իսկ սփյուռքահայ երիտասարդները կվերագտնեն իրենց պատմական հայրենիքը: Համոզված եմ, որ անկախ խաղերի արդյունքներից, հաղթելու են բոլորը: Մաղթում եմ արդար պայքար, մարզական նվաճումներ եւ անմոռանալի օրեր: Համահայկական 4-րդ խաղերը հայտարարում եմ բացված»:

Այնուհետեւ մարզադաշտում սկսվեց ծրագրի մշակութային մասը, որի ընթացքում ելույթ ունեցան միայն հայաստանցի երգիչներ՝ Հայկոն, Քրիստինե Պեռելյանը, Աշոտ Ղազարյանը, Արման Հովհաննիսյանը, Ինգա եւ Անուշ Արշակյանները, Անդրեն, Աիդա Սարգսյանը, Թաքան եւ Արա Գետրգյանը, պարային համույթները: Ցուցադրական ելույթներով հանդես եկան տարբեր մարզաձեւերի ներկայացուցիչները, որոնք ուղեկցվում էին ճոխ հրավառությամբ: Այստեղ հարկ է նշել մեկ նկատառում: Քանի որ խաղերը Համահայկական են, ապա ցանկալի կլիներ, որպեսզի բացման արարողության ժամանակ ելույթներ ունենային նաեւ սփյուռքահայ երգիչները:

ՇԱԽՄԱՏ

Անանդը ռեւանշի հասավ Արոնյանի նկատմամբ

Ֆիդեի շախմատի վարկածով աշխարհի չեմպիոնի տիտղոսը նվաճելուց հետո Լեւոն Արոնյանը նույն երեք մասնակիցների հետ վիճարկեց արագ շախմատի աշխարհի առաջնության հաղթողի կոչումը: Կրկին երկու շրջանով անցկացված մրցաշարում չորս շախմատիստները որոշեցին եզրափակիչի երկու մասնակիցներին: Այս անգամ լավագույն արդյունքի հասավ Անանդը (4 միավոր), որին կես միավորով զիջեց Արոնյանը: Կասպիրովի օգտին գրանցվեց 2,5 միավոր, իսկ Բարոն նրանից հետ մնաց կես միավորով:

Արոնյանը 2 պարտիաներում էլ առավելության հասավ Բարոյի նկատմամբ: Անանդի հետ առաջին շրջանի մրցախաղում հայ գրոսմայստերը պարտվեց, իսկ երկրորդում ոչ-ոի խաղաց: Կասպիրովի հետ 2 պարտիաներն էլ ավարտվեցին ոչ-ոի:

Այսպիսով, եզրափակիչում գլխավոր մրցանակը կրկին վիճարկեցին Անանդն ու Արոնյանը: Այս անգամ հնդիկ գրոսմայստերին հաջողվեց ռեւանշի հասնել Ֆիդեի շախմատի վարկածով մրցաշարում կրած պարտության դիմաց: Նա չորս պարտիայից բաղկացած մրցախաղը շահեց 2,5-1,5 հաշվով: Առաջին երեք պարտիաներն ավարտվեցին ոչ-ոի, իսկ վերջին պարտիայում հաջողությունն ուղեկցեց սեւերով խաղացող Անանդին:

Սարյանն ու Անասասյանն առաջատար խաղակում են

Աբու Դաբիի շախմատի մրցաշարի վերջին տուրում բավական հաջող են հանդես գալիս Աշոտ Անասասյանն ու Կարեն Սարյանը, որոնց շնորհիվ նրանք այժմ առաջատարների խմբում են: Մեր շախմատիստները վերջին 3 տուրում 2,5-ական միավոր վաստակեցին: Անասասյանը հաղթեց Ամինին ու Մահջուբին եւ ոչ-ոի ավարտեց պարտիան Նեւերովի հետ ու վաստակեց 6,5 միավոր: Կարեն Սարյանը նախ հաղթեց Յանկովիչին, ապա ոչ-ոի խաղաց Ամինի հետ, իսկ 8-րդ տուրում պարտության մատնեց Զոբավային: Կարեն Սարյանը իր հաշվին գրանցել է 6 միավոր:

8 տուրից հետո Աշոտ Անասասյանը եգիպտացի Բասեմ Ամինի հետ 6,5 միավորով գլխավորում է աղյուսակը: Կարեն Սարյանն առաջատարներից հետ է մնում կես միավորով եւ ուկրաինացի Վալերի Նեւերովի հետ բաժանում է 3-4-րդ տեղերը: 9-րդ տուրում բավական մեծ հետաքրքրություն է ներկայացնում հայ երկու գրոսմայստերների անձնական հանդիպումը, որի ելքը մեծապես կարող է ազդել մրցանակային տեղերի բաշխման վրա: Նույնը կարելի է ասել նաեւ Նեւերով-Ամին մրցախաղի մասին:

Պարտությանը հաջորդեցին հաղթանակները

Շախմատի «Ակրոպոլիսի» գավաթի խաղարկությունում փոփոխակի հաջողությամբ է խաղում Էլինա Դանիելյանը: 4-րդ տուրում նա պարտվեց Աննա Բուրասովային, իսկ հաջորդ պարտիան շահեց Ալեքսանդր Ստիրից: Հաջող էր նաեւ 6-րդ տուրը, որում մեր շախմատիստուհին հաղթեց Ասանասիոս Կարագիանիսին: 6 տուրից հետո Էլինան վաստակել է 3,5 միավոր: Իսկ առաջատարը Իսրայելը ներկայացնող Իլյա Սմիրինն է՝ 5,5 միավոր:

Առաջին մեդալներն ու միավորները

Համահայկական 4-րդ խաղերի առաջին մեդալները վիճարկեցին թեթեւատլետներն ու լողորդները: Այս մարզաձեւերում բացահայտ էր հայաստանցի մարզիկների առավելությունը: Կանանց 400 մ վազքում 57,9 վրկ արդյունքով չեմպիոն հռչակվեց վանաձորցի Գայանե Բուլղադարյանը, իսկ տղամարդկանցից նույն մրցաշարածությունում լավագույնն էդվարդ Մանգասարյանն էր: Նրա արդյունքը (47,9 վրկ) Համահայկական խաղերի նոր ռեկորդ էր: 100 մ վազքում հաղթողներ ճանաչվեցին երեւանցի Անի Խաչիկյանը (12,1 վրկ) եւ Գլենդելի ներկայացուցիչ Զոնի Տեր-Եղիյանը (10,3 վրկ): Երեւանցի Աննա Եգորյանի հաղթանակով ավարտվեց կանանց 1500 մ վազքը (4.55,1), իսկ տղամարդկանցից հաջողությունն ուղեկցեց Ախալցխայի ներկայացուցիչ Գիգլա Մկոյան-Չիլբերտեյնին (4.00,0): Գնդի հրման հաստվածում լավագույն արդյունքի հասավ թբիլիսցի Բենիկ Աբրահամյանը: Հեռացատկի մրցումներում չեմպիոնի կոչմանն արժանացավ Հայկանուշ Բեգլարյանը (Կապան)՝ 5 մ 67 սմ:

Լողի մրցումներում անվիճելի էր երեւանցի լողորդների առավելությունը, որոնք նվաճեցին 6 ոսկե, 2 արծաթե, 1 բրոնզե մեդալներ: Ոսկե մեդալների արժանացան Անահիտ Բարսեղյանը (50 մ ազատ ոճ), Վարդուհի Ավետիսյանը (100 մ բրաս), Հարություն Հարությունյանը (50 մ ազատ ոճ), Ալիկ Ալիֆյանը (100 մ բրաս), Միխայել Քոլոյանը (200 մ ազատ ոճ): Աղջիկների 4Χ50 մ փոխանցումալողն ավարտվեց Երեւանի թիմի հաղթանակով:

Սկսվել են խաղային մարզաձեւերի նախնական մրցումները: Ֆուտբոլի մրցաշարում գրանցվել են նաեւ գերխոշոր հաշիվներ (Սամբուկ-Թբիլիսի՝ 11-2, Ալմելո-Երեւան՝ 0-7, Ֆրանկֆուրտ-Ստեփանակերտ՝ 2-6): Մյուս խաղերի արդյունքներն այսպիսին են՝ Բառնաուլ-Թեհրան՝ 0-0, Նինոծմինդա-Գլենդել՝ 1-5, Սոչահան-Բրյուսել՝ 3-0, Բուենոս Այրես-Գյումրի՝ 3-0, Նիկոսիա-Լոս Անջելես՝ 2-5:

Ֆուտզալի մրցումներում ամենախոշոր հաշիվը գրանցվել է Մարսել-Սան Պաուլո (2-17) եւ Բեյրութ-Թեհրան (1-15) մրցախաղերում: Մյուս արդյունքներն են. Գյումրի-Վիեննա՝ 3-0, Մանչեսթր-Բուենոս Այրես՝ 0-7, Ղամբլի-Վանաձոր՝ 1-12, Թբիլիսի-Նինոծմինդա՝ 9-4, Սամբուկ-Վլադիմիր՝ 3-12, Երուսաղեմ-Մոնրեալ՝ 9-2:

Վոլեյբոլի մրցաշարում հետաքրքրական զուգադիպությամբ բոլոր հանդիպումներն էլ ավարտվել են միեւնույն 3-0 հաշվով: Մեծ հետաքրքրություն ներկայացնող բասկետբոլի մրցաշարում էլ գրանցվել են մի քանի արտառոց հաշիվներ, ինչը վկայում է թիմերի խաղամակարդակների զգալի տարբերության մասին: Գյումրիի կանանց թիմը 101-7 հաշվով հաղթել է Վիեննային, իսկ թբիլիսցի բասկետբոլիստուհիները Սոչահանի թիմի հետ խաղում միայն 5 միավոր են վաստակել մրցակցի 69-ի դիմաց: Ներկայացնենք մյուս արդյունքները: Կանայք՝ Գլենդել-Թեհրան՝ 52-61, Ստեփանակերտ-Նիս՝ 63-27, Աթենք-Թավրիզ՝ 62-40, տղամարդիկ՝ Ստեփանակերտ-Վիեննա՝ 30-60, Սոչի-Լոնգ Բիչ՝ 66-53, Սոչահան-Ախալքալաք՝ 74-36, Թեհրան-Լա Կրեչեթա՝ 75-65, Ժնեւ-Կահիրե՝ 86-72, Թավրիզ-Սիդնեյ՝ 38-83, Նիս-Ֆրեզնո՝ 33-82, Գյումրի-Սամբուկ՝ 60-73, Գլենդել-Մոնրեալ՝ 105-35, Երեւան-Կիեւ՝ 110-34:

Էջը պատրաստեց ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

Օրվա հետքերով

Ով ինչ է շահում

Ռուսական մամուլում ներգաղթողների վերաբերյալ նյութերը սովորաբար ներկայացվում են բացասական երանգներով, իբր զոռով եկել-լցվել են մեր երկիրը, աղտոտում են այն, զբաղեցնում են տեղացիների աշխատատեղերը, մեծ գումարներ են փոխանցում իրենց երկրներ եւ այլն:

Թողնենք հարցի բարոյական կողմերը եւ ուշադրություն դարձնենք Ռուսաստանի համար ներգաղթողների օգտակարության կամ վնասակարության հանգամանքին, ելնելով ներգաղթի դաշնային ծառայության հրապարակած վերջին տվյալներից, որոնք, ի դեմ, աշխույժ քննարկման առարկա են դարձել: Կարդում ես, օրինակ, որ տաջիկների եկամուտը հասնում է Տաջիկստանի երկու ազգային բյուջեին: Վրացիների ուղարկած գումարը կազմում է Վրաստանի համախառն ներքին արդյունքի 20 տոկոսը եւ այլն: Ծանոթանալով համանման փաստերին, կարող ես մտածել, որ ներգաղթողները պարզապես թալանում են երկիրը: Մինչդեռ ինչ է պարզվում: Տարեկան Ռուսաստան է գալիս մոտ 20 միլիոն մարդ, որից միայն կեսն է ձեւակերպվում որպես օրինական աշխատող: Նրանք վաստակում են մոտ 20 միլիարդ դոլար: Սակայն, քանի որ եկվորների աշխատավարձը 2-3 անգամ է տեղացիներից, ապա ներգաղթողների ավանդը Ռուսաստանի համախառն ներքին արդյունքում հասնում է 50 միլիարդի: Իսկ եթե նկատի ունենանք, որ աշխատող շատ ներգաղթողներ հայտնվում են ստրկական պայմաններում եւ գրեթե ոչինչ չեն վաստակում, ապա հիբյալ թիվը հանգիստ կարելի է մեծացնել:

Ավելին, մոսկովյան թերթերից մեկում բոլորովին այլ տվյալներ է բերում «Ֆինէքսպերտիզա» ընկերության գլխավոր տնօրենի տեղակալ Աղվան Միխայելյանը: Նրա ասելով, ներգաղթի դաշնային ծառայության որոշ տվյալներ նվազեցված են: Համաշխարհային բանկի գնահատմամբ, Ռուսաստանի համախառն ներքին արտադրանքը կազմում է մոտ 987 միլիարդ դոլար: Ահա եւ, Միխայելյանի կարծիքով, եթե նկատի առնվի, որ ներգաղթողները Ռուսաստանի տնտեսությունում զբաղեցնում են աշխատուժի մոտ 10 տոկոսը, ապա նրանց համախառն ավանդը կարող է հասնել մինչեւ 100 միլիարդի: Ինչ է ստացվում. եկվորները վաստակում են 20 միլիարդ դոլար, իսկ երկրին թողնում են 100 միլիարդ:

Դե արի ասա, թե ով է շահում դրանից:

ՌՈՒԲԵՆ ՀԱՅԲԱՊԵՏՅԱՆ
Մոսկվա

Նուբար Պողոս Թուր-Սարգիսյան

Հուլիսի 21-ին ուրբանչորս տարեկանում Սան Ֆրանցիսկոյում վախճանվել է ճանաչված փաստաբան Նուբար Պողոս Թուր-Սարգսյանը, հաղորդում է «Արմինյն միրոր սփեքթեյթր» շաբաթաթերթի օգոստոսի 11-ի համարը:

1922 թվին Զահլեում (Լիբանան) ծնված Նուբարը որդին էր լիբանանյան բանակի բարձրաստիճան պաշտոնյա Պողոս Թուր-Սարգսյանի: Նա առաջինն էր, որ 1938-ին արբերենով հանձնել է բակալավրի քննությունները: Հետագայում հաջողությամբ ավարտելով Բեյրութի ճիզվիտների համալսարանը եւ դոկտորական պաշտպանելով նախ աշխատել է այդ ժամանակվա ֆրանսիական զինվորական կառավարչի անձնական քարտուղար, ապա քառասուն տարի շարունակ որպես անկախ Լիբանանի ամենահարգված իրավաբաններից մեկը, որը մասնագիտացած էր հատկապես անշարժ գույքի հարցերում: Տեղական մամուլում ստորագրել է բազմաթիվ հոդվածներ: Տիրապետել է ֆրանսերենին եւ արաբերենին: Եղել է նաեւ շնորհալի հոեստոր: Տեղափոխվել է Մ. Նահանգներ 1997-ին, որտեղ շարունակել է իր ակտիվ մասնակցությունը մասնավորապես կաթոլիկական համայնքի աշխատանքներին: Իր ծառայությունների, հատկապես Բեյրութում մի շարք հայկական կազմակերպությունների (այդ թվում ՌԱԿ եւ ԹՄՄ) եւ կարդինալ Աղաջանյանի իրավական հարցերով խորհրդատուն լինելու եւ իր գործը նվիրվածությամբ կատարելու համար Հռոմի պապ Հովհաննես Պողոս Բ-ի կողմից 1995-ին արժանացել է «Սուրբ Սիլվեստրի անվան ասպետի» կոչմանը:

Հանգիստ իր ոսկորներին:

Հ. Ծ.

Հուղարկավորություն Ռուդոլֆ Խաչատրյանի

Գերմանիայում վիրահատությունից հետո մահացած մեծ գեղանկարիչ Ռուդոլֆ Խաչատրյանի աճյունը Մոսկվայից օգոստոսի 22-ին կտեղափոխվի Երեւան եւ հինգշաբթի օրը, ժամը 12-14-ը Կամերային երաժշտության տանը տեղի կունենա վերջին հրաժեշտի արարողությունը: Նույն օրը նկարչի դագաղը կտեղափոխվի եւ կամփոփվի խաղաղային պանթեոնում (Թոխմախ):

Հայաստանի Թեմերյան մշակութային միության կենտրոնական վարչությունը հայտարարում է

Վահան Թեմերյան ամենամյա մրցանակաբաշխություն հետեւյալ բնագավառներում

1. Գեղարվեստական գրականություն
2. Երաժշտություն
3. Գեղանկարչություն
4. Ռադիո եւ հեռատեսություն
5. «Ազգ» օրաթերթում լավագույն հրապարակման համար («Հակոբ Վարդիվառյան» մրցանակ)
6. Դպրոցականների եւ մանուկների համար գրված ստեղծագործությունների համար «Արա եւ Մարալ» մրցանակ, սահմանված է Սիլվա Տեր-Ստեփանյանի (Նյու-Յորք) կողմից
7. Սոցիալ-քաղաքական երգիծանքի համար «Դավիթի պարատիկեն» մրցանակ, սահմանված է Իռմա Տեր-Ստեփանյանի (Նյու-Յորք) կողմից
8. Քանդակագործություն («Բաբկեն եւ Անահիտ Մկրտաններ» հիմնադրամի մրցանակ)
9. Թատրոն («Բաբկեն եւ Անահիտ Մկրտաններ» հիմնադրամի մրցանակ)

- Նշյալ մրցանակներից յուրաքանչյուրին արժանացած անհատը կամ խումբը կստանա համապատասխան դիպլոմ եւ դրամական պարգեւ:
- Մրցանակների հավակնելու իրավունք ունեն ստեղծագործողներ ինչպես Հայաստանից, այնպես էլ սփյուռքից:
- Մրցանակի կարող են ներկայացվել 2006 թվականին ստեղծված աշխատանքները:
- Մրցույթին իրավունք ունեն գործեր ներկայացնել Հայաստանի ստեղծագործական միությունները, ՀՀ նախարարությունները, ՀՀ ԳԱ ակադեմիան, բոհեմը, հասարակական կազմակերպությունները, հրատարակչությունները, զանգվածային լրատվական միջոցները, սփյուռքահայ միությունները:
- Մրցույթին չեն կարող աշխատանքներ ներկայացնել ՀԹՄՄ կենտրոնական վարչության եւ մրցանակներ շնորհող հանձնաժողովի անդամները:
- Գործերն ընդունվում են ներկայացնող կազմակերպության պաշտոնական երաշխավորությամբ՝ հաստատված կնիքով:
- Գործերն ընդունվում են հետեւյալ հասցեով՝ Երեւան, Խանջյան 50, Թեմերյան մշակութային միություն, մրցանակներ շնորհող հանձնաժողովին:
- Գործերի ընդունման ժամկետը՝ **2007 թ. հուլիսի 1-ից մինչեւ դեկտեմբերի 1-ը:**

ՅՈՒՆԻԲԱՆԿԸ

առաջարկում է բացառիկ պայմաններ

HYUNDAI

մակնիշի ավտոմեքենաների ապառիկ վաճառքի համար

Հայաստանում «Հյունդայ» ավտոմեքենաների ուղղակի ներկրող եւ միակ դիստրիբյուտոր՝
«ՄԱԳԱՍ ԻՆՎԵՍ» ՓԲԸ

Պայմաններ՝ «Հյունդայ»-ի բոլոր մոդելների համար

Կանխավճար՝	10 %
Մարման ժամկետ՝	6 տարի
Տոկոսադրույք՝	14 %

«ՄԱԳԱՍ ԻՆՎԵՍՏ» ՓԲԸ

հասցե՝ Աճառյան 60 հեռ՝ (010) 521640, ֆաքս՝ (010) 581607, բջջ.՝ 091-411422, 093-411422, 094-411422
e-mail: magas@arminco.com

ՏՈՒԲՈՒԵԻ

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՀՀ կենտրոնական բանկը տեղեկացնում է, որ օգոստոսի 16-ին Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի կողմից ՀՀ կենտրոնական բանկի գրանցմանն են ներկայացվել մի շարք նոր կանոններ, ինչպես նաեւ՝ գործող կանոններում փոփոխություններ ու լրացումներ (ընդհանուր թվով՝ 22 փաստաթուղթ):

Վերոհիշյալ փաստաթղթերը տեղակայված են «www.cba.am/Արժեթղթերի շուկա/Կարգավորում/ԻԿԿ փաստաթղթեր/Գրանցման ներկայացված կանոններ/Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» կայքում:

Շահագրգիռ անձինք կարող են վերոհիշյալ կանոնների վերաբերյալ իրենց գրավոր առաջարկությունները եւ դիտողությունները ներկայացնել ՀՀ կենտրոնական բանկ մինչեւ օգոստոսի 30-ը:

ԿԲ մամուլի ծառայություն

Վերանորոգման աշխատանքների իրականացման հետաքրքրության հայտ ներկայացնելու ՀՐԱՎԵՐ

ԱՄՆ ՄԶԳ ֆինանսավորմամբ «Ինթրահելթ Ինթերնեյշնլ Ինք.» ընկերության կողմից իրականացվող ՆՕՎԱ ծրագիրը խորհրդատվական եւ տեխնիկական աջակցություն է տրամադրում ՀՀ կառավարությանը՝ վերարտադրողական առողջության ոլորտում բարեփոխումների իրականացման ուղղությամբ:

«Ինթրահելթ Ինթերնեյշնլ Ինք.» ընկերությունը հրավիրում է բոլոր հետաքրքրված եւ իրավասու շինարարական կազմակերպություններին ներկայացնել Սիսիանի հիվանդանոցի ծննդատան երկրորդ հարկում վերանորոգման աշխատանքներ իրականացնելու հետաքրքրության հայտ:

Հայտատուները պետք է ներկայացնեն.

ա) նամակ՝ հետաքրքրության հայտ, որը պետք է ներառի աշխատանքի նկարագրում նշված յուրաքանչյուր աշխատանքի իրականացման արժեքը,

բ) քաղաքացիական ոլորտում կապիտալ շինարարության իրականացման լիցենզիայի պատճենը,

գ) ՀՀ պետռեգիստրում գրանցման վկայականի պատճենը,

դ) վերջին երեք տարիներին շինվերանորոգման աշխատանքների իրականացման փորձառության վերաբերյալ տեղեկատվություն՝ ներառելով օբյեկտների եւ պատվիրատու կազմակերպությունների անվանումները, պայմանագրային արժեքները, աշխատանքների համառոտ նկարագիրը, պատասխանատու անձանց տվյալները,

ե) այլ տեղեկատվություն, որն անհրաժեշտ կհամարի Հայտատուն:

Մասնակցելու համար հարկավոր է գրավոր դիմել «Ինթրահելթ Ինթերնեյշնլ Ինք.» ընկերության ներկայացուցչություն՝ թերությունների ակտը սանալու համար:

Պայմանագրի արժեքը լինելու է հստակ սահմանված եւ աշխատանքը պետք է սկսվի սեպտեմբեր ամսին եւ ավարտվի մինչեւ 2007թ. նոյեմբերի 30-ը:

Գնային առաջարկները գնահատվելու են հիմք ընդունելով հետեւյալ չափանիշները.

1. Գին.
2. Հայաստանի Հանրապետությունում շինարարության, ճարտարագիտության եւ ձեռներեցության ոլորտներում արտոնագրերի առկայություն.
3. Երաշխավորագրեր կամ աշխատանքների ընդունման-հանձնման ակտեր վերջին երեք պատվիրատուներից.
4. Միջազգային կազմակերպությունների եւ պետական կառավարման մարմինների հետ աշխատելու փորձ:

Բոլոր առաջարկները պետք է ներկայացվեն «Ինթրահելթ Ինթերնեյշնլ Ինք.» ընկերության հայաստանյան ներկայացուցչության գրասենյակ փակ ծրարով մինչեւ 2007թ. սեպտեմբերի 10-ը, ժամը՝ 17:00:

Մանրամասների համար դիմել՝
Մարզային կոորդինատոր Արտակ Օրդյանին
էլ-փոստ՝ a-ordyan@nova.am, հեռ.՝ 27-70-65/69 (093) 426871
Երեւան, Այգեձոր 7, ԱՄՆ ՄԶԳՆՕՎԱ ծրագիր

«Վահագնի» թաղամասում գործող **«Սիրանուշ Եղիազարյան» դիվանագիտական դպրոցը** կազմակերպում է 2007-2008 ուսարվա ընդունելություն:

Դպրոցի կազմի մեջ ներառված են երաժշտական, շախմատի, սպորտ դպրոցները: Դպրոցն աշխատում է փոխադրամիջոց եւ սնունդ:

Հեռ. 398104, 091.427224
www.diplomaticschool.nt.am

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ՅԱՆԳԱՇՄԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունեություն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետության 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրված՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աբեղյան: Տպաքանակ՝ 3000, ստորագրված է տպագրության՝ 20.08.2007, գինը՝ 100 դրամ, տպագրում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում՝ Արշակունյաց 2: